ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԵՎ
ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ուսուցումը երկրորդ դասարանում

Կազմողներ
ԳԵՎՈՐԳ ՀԱԿՈԲՅԱՆ
ԱՆԱՀԻՏ ԱՐՆԱՈՒԴՅԱՆ
ՄԱՐԻԵՏ ՍԻՄՈՆՅԱՆ
ԱՒԴԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԵՎ
ՇՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ուսուցումը երկրորդ դասարանում

ԵՐԵՎԱՆ 1996 «ՇԱՂԻԿ»



Մինչև պատանեկան տարիքը ոչ մի վերացական դասավանդում, բառիս խիստ իմաստով, պիտանի չէ երեխայի համար: Նա յուրացնում է միայն կոնկրետը: Կարելի է նրա վզին փաթաթել վերացականը, բայց նա դա չի ընկալի: Ուստի, սխալ է նրան այդ տարիքում ստիպել, որ յուրացնի քերականական սահմանումներ, տանջել նրան՝ տալով, օրինակ, գոյական անվան, բայի, ենթակայի, լրացուցչի և այլնի սահմանումները:

Դիստերվեգ

Երեխան մայրենի լեզվի կրողն է: Լավ, թե վատ, ճիշտ, թե սխալ այդ լեզվով հաղորդակցվում է՝ արտահայտում է մտքեր, հասկանում է դիմացինին: Լեզուն ամբողջական կառույց է, որն ունի՝ յուրաքանչյուր երեխա: Նա այն կրում է՝ առանց նկատելու իր օգտագործած լեզվի օրինաչափությունները, առավել ևս՝ առանց կանոնարկելու դրանք: Մայրենի լեզուն հարազատ է երեխային, մոտ է, չի վախեցնում: Որպես ուսումնառության նյութ այն գրեթե անփոխարինելի է: Սակայն այստեղ կա մի լուրջ խոչընդոտ. լեզուն վերացական երևույթ է: Քերականությունը գիտություն է լեզվի մասին և հասկանալի է, որ նույնպես վերացական է: Մայրենի լեզվի ուսուցման տարիների փորձը ցույց է տալիս, որ երեխան այդ տարիքում հակված է կոնկրետը, տեսանելին, շոշափելին ընկալելու, և կրտսեր դպրոցում քերականության տեսության ուսուցումն անօգուտ է, նրա համար անմատչելի: Երեխան իր չուսումնասիրած, չհետազոտած, վերացական լեզուն չի կարող կանոնարկել, իսկ պատրաստի կանոնները առանց ընկալելու սերտել տալը ոչ միայն օգտակար չէ, այլև վնասակար է: Այստեղ է, որ խիստ կարևորվում է քերականության մատուցման **ինչքանն** ու **ինչպեսը**:

Ինչպես ցանկացած առարկայի, այնպես էլ քերականության ուսուցումը դպրոցում ինքնանպատակ լինել չի կարող: Ի՞նչ հմտություններ կարող է զարգացնել այն: Ահա դրանցից մի քանիսը.

դիտողականություն,

երևույթների նկատմամբ զննական, քննական հայացքի մշակում,

տրամաբանության զարգացում. այն է՝

վերլուծելու և համադրելու հմտությունների զարգացում,

մասնավոր դիտարկումներով օրինաչափությունների հայտնագործում,

ընդհանրացումներ կատարելու հմտության մշակում:

Հատկապես կրտսեր դպրոցում քերականություն ուսուցանելիս պետք է ընտրվեն միայն լեզվական այն երևույթները, որոնք երեխան կարող է ինքնուրույն դիտարկել, քննարկել, եզրահանգումներ անել, սեփական դիտարկումներով հայտնագործել: Եվ միայն այս դեպքում է, որ քերականության

ուսուցումը կարող է զարգացնել թվարկված կարևորագույն հմտությունները: Քերականության այսպիսի ուսուցումը համարվում է ակտիվ յուրացում, որն էլ բերում է հմտությունների զարգացմանը:

2-րդ, 3-րդ, 4-րդ դասարանների հայոց լեզվի գիրք-տետրերում միայն քերականությունը չէ, որ ընդգրկված է, որովհետև լեզվի ուսուցումը միայն քերականության ուսուցում չէ: Որպես կենդանի, զարգացող համակարգ՝ լեզուն անընդհատ փնտրում է մտքի, զգացմունքի, ապրումի արտահայտության համարժեք ձևեր: Գիրք-տետրերում վարժությունների, առաջադրանքների, շարադրությունների բազմազանությունն ու մատուցման յուրահատկությունը նպատակ ունեն նպաստելու երեխայի գրավոր ինքնարտահայտման պահանջմունքի զորացմանը:

Գիրք-տետրերում ընդգրկված են լեզվաբանության գրեթե բոլոր բաժինները, սակայն ոչ ամբողջությամբ, այլ մատչելիության աստիճանով, այնքանով, որքանով աշակերտը կարող է ինքնուրույն դատողություններ անել տվյալ լեզվական երևույթի շուրջ, տեսնել օրինաչափությունը:

Գիրք-տետրերում վարժությունները, առաջադրանքներն ու հարցերը բաժիններով չեն տրված, այլ խառն են՝ պարզից բարդ սկզբունքով:

Դրանք նախատեսվում են առավելագույն ինքնուրույն աշխատանքի համար: Ներկայացնում ենք այն համակարգը, որի հիման վրա կազմված են հայոց լեզվի գիրք-տետրերը:

Հնչյունաբանություն

Աշակերտին հնչյունների դասակարգումը չի ներկայացված, որքան էլ որ կարևոր է նրա դերը լեզվական տարբեր երևույթներ բացատրելու հարցում: Հնչյունների դասակարգումը բարդ երևույթ է՝ կապված նաև արտասանական ապարատի հետ, և երեխայի համար ո՛չ տեսականորեն, ո՛չ էլ գործնականում հաղթահարելի չէ:

Գիրք-տետրում հնչյունաբանությունից առաջարկված են վարժություններ, որտեղ աշակերտը տեղաշարժում է հնչյունը, դիտում է նրան տարբեր դիրքերում, փոխում է և արդյունքում տարբեր բառեր է ստանում: Աշակերտը տեսնում է, որ մեկ հնչյունի փոփոխությունից կամ տեղաշարժից փոխվում է բառիմաստը, որ նույն հնչյունախմբով, բայց հնչյունների տարբեր դասավորություններով տարբեր բառեր է ստանում: Կարևորվում է հնչյունը՝ որպես առանձին, իմաստազատիչ, կարևորագույն միավոր: Հնչյուններով բառեր կազմող երեխան, որպեսզի հնարավորին չափ շատ բառեր գրի, արագ օգտագործելով իր ակտիվ բառապաշարը, սկսում է պրպտել, գտնել նաև այնպիսի բառեր, որոնք քիչ է օգտագործում: Պակաս կարևոր չէ նաև հնչյունները տարբեր դիրքերում փորձող և հանկարծ ծանոթ բառ հայտնաբերող երեխայի հրճվանքը:

Հնչյունափոխություն

Բառակազմության (բարդացում, ածանցում) կամ ձևակազմության (հոլովում, խոնարհում, հոգնակիակազմություն) ժամանակ աշակերտը հաճախ է հանդիպելու հնչյունափոխության երևույթին: Աշակերտի ուշադրությունը հարցադրումներով հրավիրված է դրա վրա: Բառի հետ կապված փոփոխությունը աշակերտն է արձանագրում՝ ո՛ր հնչյունը փոխվեց, ի՛նչ դարձավ, ի՛նչ կատարվեց նրա հետ: Այս վարժությունները զարգացնում են աշակերտի լեզվական դիտողականությունը: Նա ուշադիր է դառնում բառի, նրա հետ կատարվող փոփոխությունների նկատմամբ: Սա օգնելու է բառի մեջ մտնող բաղադրիչների ճիշտ վերականգնմանը, նաև՝ բառիմաստի ընկալմանը:

Վանկ

Կան վարժություններ, որտեղ աշակերտն աշխատում է վանկերի հետ (միացնում է վանկերը, ստանում բառեր, բառի մեջ փոխում է վանկը, այլ բառ ստանում...): Այս վարժություններն ուղղված են այն բանին, որ աշակերտը վանկն ընկալի որպես հնչյունաբանական-արտասանական մեկ միավոր: Դրանք կօգնեն նաև բառի մեջ առանձնացնելու վանկի սահմանները: Բառի մեջ (հատկապես բազմավանկ բառի) վանկը ճիշտ սահմանազատող աշակերտը կարողանում է նաև գրավոր ճիշտ վերարտադրել բառը: Վանկի ճիշտ զգացողությունը կտանի նաև բառի հնչական պատկերի ընկալմանը:

Ուղղագրություն

«Ուղղագրության ուսուցումը համարվում է գրավոր խոսքի ուսուցման հիմնական խնդիրը. մինչդեռ ուղղագրությունը գրավոր խոսքի ուսուցման միայն արտաքին կողմն է, տեխնիկական կողմը: Գրավոր խոսքի հիմնական կողմը շարադրելու հմտություն մշակելն է»: **Արարատ Ղարիբյան**

Ուղղագրությունը (ուղղագրական դժվարություն ունեցող բառերի գրությունը) գրագիտությունն ապահովող բաժիններից մեկն է: Մինչև ուղղագրական վարժություններին անցնելը, ուսուցիչն արդեն բազմիցս, ընթերցարանների նյութի հիման վրա, աշակերտների ուշադրությունը հրավիրած կլինի մի շարք հնչույթների գրության և արտասանության տարբերության վրա: Դրանից հետո արդեն, երբ գիրք-տետրերում կհանդիպեն վարժություններ, որոնք երեխայի ուշադրությունը կհրավիրեն դժվար ուղղագրություն ունեցող բառերի վրա, ուսուցիչը գործնականում կարող է ստուգել, թե երեխան որքանով է յուրացրել այդ բառերի գրությունը: 4-րդ դասարանում ուղղագրական բառարանի հետ աշխատող աշակերտն արդեն գործնական շփման միջոցով ավելի լավ կհիշի բառերի գրությունը:

Բառագիտություն

Երեխային տրվում են «քանդած բառեր», որոնք նա «հավաքում է» ու ստանում իրեն ծանոթ բառեր, ինքն է բառերը քանդում և տեսնում նրա բաղադրիչները, այն փոփոխությունները, որոնք բառերի հետ կատարվում են բառաբարդման կամ ածանցման ժամանակ, քննում է ածանցների իմաստները, լեզվական տրամաբանությամբ բացատրում է իրեն անծանոթ բառերը, տեսնում է հոդակապը և բացատրում դրա դերը:

Ածանց

Ածանցը ևս իմաստային միավոր է, չնայած այն բանին, որ այն նյութական իմաստ չի արտահայտում, այլ ունի վերաբերական ընդհանուր իմաստ: Սկզբում աշակերտը օգտագործում է ածանցը, կազմում է նոր բառ, տեսնում է նրա բառակազմական արժեքը, ապա գտնում է նաև ածանցի արտահայտած իմաստը: Առանձնացված են այն ածանցները, որոնք նախ՝ բառակազմության մեջ առավել ակտիվ են, նրանցով կազմված բառեր ավելի շատ են հանդիպում, երկրորդ՝ նրանց արտահայտած իմաստը երեխայի համար տեսանելի է, և աշակերտն ինքնուրույն կարող է դուրս բերել այդ իմաստը:

Հոմանիշություն

Հոմանիշությունը ներկայացնող վարժություններին բավականին մեծ տեղ է հատկացված: Լեզվական այս երևույթը՝ հոմանիշությունը, լեզվի հարստության չափանիշներից է: Եվ որքան աշակերտը լավ տիրապետի այդ երևույթին, այնքան ազատ կլինի լեզվի գործածության մեջ, կխուսափի անհարկի կրկնություններից, անկաշկանդ կլինի մտքերը հաղորդելիս, անհրաժեշտության դեպքում լեզվական փոխակերպումներ կկատարի:

Հոմանիշությունը լեզվական լայն երևույթ է. ոչ միայն բառային, քերականական՝ ձևաբանական, շարահյուսական հոմանիշություն, այլև նույն մտքի ուրիշ ձևակերպում, այլ արտահայտաձև, համարժեք մտքի հաղորդում: Լայն առումով հոմանիշության տիրապետումը լեզվական շատ կարևոր ունակություն է՝ լեզվական ճկունություն: Հոմանիշության հետ կապված աշխատանքներն սկսվում են նախ և առաջ բառային հոմանիշությունից: Տրված վարժություններում աշակերտը ընտրում է բառերից մեկը: Ակնհայտ է, որ ինչքան էլ իմաստով մոտ լինեն այդ բառերը, դրանք, այնուամենայնիվ, հոմանիշներ են և ունեն իմաստային նուրբ տարբերակումներ, լիովին փոխարինելի չեն և միշտ չէ, որ կարող են իրար փոխարեն գործածվել: Այդ երևույթը ցույց է տրվում վարժություններում: Այս տիպի վարժություններում աշակերտը փորձելու է պատճառաբանել իր ընտրությունը: Աշակերտները կտեսնեն, որ բառի ընտրությունը կապվում է նախադասության իմաստի, արտահայտված ընդհանուր վերաբերմունքի հետ:

Բառային հոմանիշությունից բացի տրվում է դարձվածքային հոմանիշությունը: Սա այնքան էլ հեշտ աշխատանք չէ: Որպեսզի աշակերտը կարողանա մի դարձվածքը մի ուրիշ հոմանիշով փոխարինել, պետք է հասկանա և՛ մեկ դարձվածքի իմաստը, և՛ մյուս: Կան նաև վարժություններ, որտեղ դարձվածքը տեքստում է փոխարինվում հոմանիշ բառով կամ արտահայտությամբ: Այսպիսի վարժությունների նպատակը ոչ միայն հոմանիշների հետ աշխատանքն է, այլև անուղղակի կերպով ոճական տարբերություններ ցույց տալը, որը հետագայում, երբ երեխան արդեն կկարողանա ոճական տարբերություններ զգալ, կզարգացվի: Երբ աշակերտն ավելի վարժ է դառնում տրված դարձվածքը տրված հոմանիշ-համարժեքով փոխելու մեջ, նրան առաջարկվում է այլ աշխատանք: Տրվում են դարձվածքներ՝ հնարավորին չափ ծանոթ և հաճախակի գործածվող, աշակերտը ինքն է գտնում դրանց հոմանիշը:

Բառային և դարձվածքային հոմանիշության այս բոլոր աշխատանքներից հետո անցնում են մտքի հոմանիշությանը՝ արտահայտված միտքն այլ ձևով՝ հոմանիշ, համարժեք մտքով արտահայտելուն:

Հականիշություն

Հականիշությունը հիմնականում վերաբերում է բառերին: Ավելի հեշտ են յուրացվում ժխտական հականիշները, և այդպիսի վարժությունները ավելի շատ են երկրորդ դասարանում:

Որպեսզի աշակերտը կարողանա ճիշտ գտնել տրված բառի հականիշը, նախ պետք է հասկանա այդ բառը, որ կարողանա գրել նրան իմաստով հակադրվողը: Այս առումով ավելի դժվար են հակադրական հականիշները: Այս հաշվի առնելով, աշակերտին առաջարկվում են լավ ծանոթ, ակտիվ բառապաշարից ընտրված բառեր: Սկզբում տրվում են վարժություններ, որտեղ կան և՛ բառերը, և՛ նրանց հականիշները: Նա ընտրում է՝ ըստ տրված օրինակի: Այդ աշխատանքին հաջորդում է բառի հականիշն ինքնուրույն գտնելը:

Իմաստաբանություն

Վարժությունների մյուս խումբը վերաբերում է բառիմաստին: Մի դեպքում ներկայացվում է բառիմաստը, որքան հնարավոր է մանրամասնորեն պատմվում է բառի մասին, բացահայտվում է նրա իմաստը, իսկ աշակերտը, ըստ նրա մասին պատմածի, գուշակում է այն: Մյուս դեպքում՝ հակառակն է արվում, տրվում է բառը, աշակերտն ինքն է պատմում նրա մասին: Այս վարժությունները կատարելիս պետք է հետևել, որ որքան հնարավոր է դիպուկ բնութագրվի բառը, տեսանելի ներկայացվի այն, ճիշտ դուրս բերվի իմաստը: Սրանք ուղղված են բառիմաստի՝ որքան հնարավոր է խոր, հնարավորին չափ ամբողջական և բազմակողմանի ընկալմանը:

Ընդհանուր և մասնավոր անուններ

Այս վարժություններն ուղղված են ընդհանուրի մեջ մասնավորը տեսնելուն և մասնավորից դեպի ընդհանուրը գնալուն:

Ներկայացնենք լեզվաբանական մյուս բաժիններից ընդգրկված նյութը:

Ձևաբանություն

Գոյական անուն
հատուկ և հասարակ գոյականներ
վերացական և թանձրացական գոյականներ
գոյականի թիվը

Ածական անուն
ածականի համեմատության աստիճանները

Թվական
քանակական թվականներ
դասական թվականներ

Բայ
բայի ժամանակները
ձայնարկություն
ստացական հոդ

Շարահյուսություն

Նախադասություն

Մեծ ուշադրություն է դարձված նաև շարադրություններին և տեքստային աշխատանքներին: Երեխային ուսուցանվում է մտքերը կապակցված շարադրելու տեխնիկան: Տրվում են նաև շարադրությունների վերնագրեր, որոնք կարող են խթանել երեխայի երևակայությունը: Տեքստային աշխատանքների համար ընտրված են ոչ գեղարվեստական նյութեր: Ֆանտաստիկ, գիտահանրամատչելի նյութերը կհետաքրքրեն երեխային և կտրամադրեն կատարելու այն լեզվական աշխատանքները, որոնք նախատեսվում են:

Վարժությունների մի մեծ խումբ ուղղված է գրավոր խոսքի մշակմանը: Գրագետ գրավոր խոսք ունենալը կարևոր հմտություն է, և այս գիրք-տետրերն ունեն այդ ուղղվածությունը: Լեզվական միջոցներն օգտագործվում են զարգացնելու երեխայի տրամաբանությունը, վերլուծելու և համադրելու կարողությունը, իր միտքն առանց խճողելու, ճշգրիտ, հստակ, հասկանալի արտահայտելը:

Խոսքի մշակումը սկսվում է մեկ նախադասության հետ տարվող աշխատանքից և հասնում մինչև որևէ թեմայի ամբողջական շարադրանքը:

Աշխատանքն սկսվում է համառոտ նախադասության ընդարձակումից, ընդարձակ նախադասության համառոտումից մինչև համառոտ տեքստի ընդարձակում և ընդարձակ տեքստի համառոտում: Այսպիսի աշխատանքներին հաջորդում են տեքստային աշխատանքները: Տեքստի համառոտմանն օգնում են հուշող-օգնող վարժությունները: Գրավոր խոսքի մշակման հաջորդ քայլը լինում է տեքստը նախադասություններով ընդարձակել ուսուցանելը, որը նույնպես սկսվում է օգնող վարժություններով: Այս տիպի վարժություններին արդեն հաջորդում են այն առաջադրանքները, որոնց մեջ պատմությունն ընդարձակվում է և՛ նախադասություններն ընդարձակելով, և՛ նոր նախադասություններ ավելացնելով:

Աշակերտի ուշադրությունն ենք հրավիրում բառերի շարադասության կարևորության վրա, թե ինչպես այն կարող է փոխել իմաստը:

Մտքերի տրամաբանական շարադրանքին է ուղղված վարժությունների մի մեծ խումբ:

Գիրք-տետրերում կան նաև շարադրության վերնագրեր: Նկարագրական և բնութագրական շարադրություններն ուսուցանվում են. տրվում են հարցեր, որոնց պատասխանում է աշակերտը: Ուսուցիչը կհետևի, որ հարցերին պատասխանելուց հետո աշակերտը նաև մտածի այդ պատասխաններն իրար հետ կապակցելու և ամբողջական, միասնական շարադրանք ստանալու մասին: Նկարագրական շարադրություններում աշակերտը պետք է աշխատի ամենայն մանրամասնությամբ պատմել նկարը: Այստեղ կարևորվում են երեխայի դիտողունակությունն ու տեսածը մանրամասնորեն շարադրելու կարողությունը:

Շարադրությունների մյուս տեսակը ազատ շարադրություններն են, որոնց վերնագրերի տարօրինակությունն ու երբեմն նաև անսպասելիությունը պայմանավորված են նրանով, որ ուղղված են երեխաների երևակայության խթանմանը:

Ուսուցիչը պետք է հետևի երեխայի ձևակերպած մտքի հստակությանը: Նախապատրաստական աշխատանքն այն կլինի, որ ուսուցիչը երեխային սեփական ուժերի նկատմամբ վստահություն ներշնչի, իսկ թեմատիկ առումով ցանկացած հուշում կկաղապարի երեխայի միտքը, կարգելի մտքի երևակայական հնարավոր թռիչքը:

Վարժությունների միջոցով աշակերտը գրավոր ճիշտ, հստակ, գրագետ հաղորդակցվելու հմտություններ է ձեռք բերում, որոնք հասկանալի է, որ պետք է գործածի գրավոր խոսքում: Որպեսզի երեխան գրավոր հաղորդակցվելու պահանջ ունենա և չձանձրանա միօրինակությունից, ընդլայնված են աշակերտի գրավոր խոսքի օգտագործման ձևերն ու շրջանակները: Բացի շարադրություններից, աշակերտը բացիկներով շնորհավորում է ընկերներին, ուսուցչին, նամակներ է գրում, օրագիր պահում, գրի առնում ծնողների ասածը, ցուցանակներ գրում և այլն:

Կետադրություն

Գրագետ գրավոր խոսքում իր դերն ունի նաև կետադրությունը: Որքան սխալ ձևակերպումն է միտքը դարձնում անհասկանալի, նույնքան էլ կետադրական նշանի ոչ տեղին գործածումը: Այս նկատի ունենալով՝ երեխայի ուշադրությունն ի սկզբանե հրավիրվում է կետադրական նշանների այս առանձնահատկության վրա: Երեխան պետք է կարևորի կետադրական նշանի օգտագործումը:

Գիրք-տետրերը նախատեսվում են աշակերտի անհատական աշխատանքի համար: Սակայն սա չի նշանակում, որ նախնական զրույց և նախապատրաստական աշխատանքներ չեն կատարվում: Որևէ լեզվական երևույթի հետ առնչվելուց առաջ, վարժությունների նոր տեսակին անցնելիս, ուսուցիչը բանավոր զրույց է վարում տվյալ լեզվական երևույթի շուրջ: Ուսուցիչը ոչ թե լեզվաբանական բացատրություններ է տալիս կամ պատրաստի սահմանումներ ասում, այլ աշակերտների ուշադրությունն է հրավիրում բանավոր խոսքում տվյալ լեզվական երևույթի արտահայտման վրա: Զրույցն այնպես է կազմակերպվում, որ աշակերտներն իրենք են բերում օրինակներ (կոչական, ուրիշի ուղղակի խոսք, համառոտ և ընդարձակ նախադասություններ և այլն): Բանավոր նախապատրաստական զրույցից հետո, երբ աշակերտներն արդեն գիտեն, թե ո՞ր երևույթի մասին է խոսքը, կարելի է անցնել վարժությունների գրավոր կատարմանը:

Ինքնուրույն աշխատող, իր համար լեզվական հայտնագործություններ անող և ստեղծագործող երեխան ձեռք է բերում լեզվական հմտություններ, իրականում տիրապետում է լեզվին, դառնում է գրագետ:

Ներկայացնում ենք վարժությունների օրինակներ 2-րդ դասարանի հայոց լեզվի գիրք-տետրից՝ ըստ լեզվաբանության բաժինների:

Հնչյունաբանություն

Հնչյուններ
Ո՞վ այս տառերով շատ բառեր կկազմի.
ա) հ, ա, ր, ի, ու, ն, տ, ս
բ) ծ, կ, ա, մ, ռ, ու, տ, ե, ց:
Ամեն անգամ նախորդ բառի մի տառը փոխելով՝ ստացի՛ր.
ծի-ից՝ լու
տառ-ից՝ նուռ
*Կարո՞ղ ես **լուսաբաց** բառի տառերով նոր բառեր կազմել:*

Վանկ

Սրանք վանկեր են: Փորձի՛ր միացնել և բառեր ստանալ.
այսպես՝ ծա-ղիկ - ծաղիկ

կա, մա, ղիկ, սին, սե, տիտ, ծա, լու, տու, ղան:
Փորձի՛ր այս վանկերով բառեր կազմել.
վակ, նի, նա, նակ, տակ, մի, ոզ, սահ, քա, գե:

Ուղղագրական վարժություններ

Սա ո տառի փողոցն է: Այստեղ ո տառով սկսվող բառերն են ապրում: Բնակիչներին նկարի՛ր, անունները գրի՛ր, նրանցից մեկի մասին պատմի՛ր: Գրի՛ր է, օ տառով սկսվող բառեր: Գրի՛ր նախադասություններ, որտեղ լինեն այդ բառերը:

Բառագիտություն

ա) բարդություններ, որոնք ունեն ինքնուրույն գործածություն ունեցող նույն բաղադրիչը (արմատական բառ):
Այս բառերին ուշադիր նայի՛ր: Գրի՛ր, թե դրանց մեջ ո՞ր մասն է կրկնվում:
հյուրասեր, հյուրանոց, հյուրեր, հյուրասենյակ, հյուրասիրել
ընկերություն, ընկերովի, խաղընկեր, դասընկեր, ընկերասեր
դասացուցակ, դասամիջոց, դասարան, դասընկեր

բ) բարդություններ, որոնք ունեն նույն բաղադրիչը, որն ինքնուրույն գործածություն չունի (հնչյունափոխված է).
Այս բառերում ո՞ր նույն բառն է «թաքնված»:
ծաղկման, ծաղկանոց, ծաղկեփունջ, ծաղկահովիտ, Ծաղկաձոր
լուսանալ, լուսավոր, Լուսաբեր, լուսաբաց, լուսամուտ
ջրոտ, ջրել, ջրային, ջրծաղիկ, Ջրահովիտ, ջրահարս, ջրհոր, ջրիմուռ, ջրաղաց

գ) Անհոդակապ բարդություններ, որոնց բաղադրիչները արմատական բառեր են.
Երկու բառ այնպես միացրո՛ւ, որ ծանոթ բառ ստանաս.
այսպես՝ խաղ-ընկեր - խաղընկեր
ծով, դաս, երես, երեսուն, քառասուն
ընկեր, ափ, հինգ, սրբիչ, յոթ

դ) Հոդակապով բարդություններ, որոնց բաղադրիչները արմատական բառեր են:
Բառերն այնպես միացրո՛ւ, որ քեզ ծանոթ բառեր ստացվեն.
այսպես՝ արև-ա-ծաղիկ - արևածաղիկ
օդ, տոն, մայր, գազար, դաս
ա
քաղաք, գույն, սենյակ, նավ, ծառ

ե) Անհոդակապ բարդություններ, որոնց բաղադրիչներից մեկը հնչյունափոխված է, մյուսը՝ արմատական բառ:
Երկու բառ այնպե՛ս միացրու, որ ծանոթ բառեր ստանաս.
այսպես՝ ծյուն-ծաղիկ -ծնծաղիկ
ջուր, ծաղիկ, թռչուն
աման, հոր, հեղեղ, ծաղիկ, որս

զ) Հոդակապով բարդություններ, որոնց բաղադրիչներից մեկն արմատական բառ է:
Բառերն այնպես միացրո՛ւ, որ քեզ ծանոթ բառեր ստացվեն.
ծյուն, մաքուր, կարմիր, շուն, երկիր
ա
գունդ, գնդիկ, գույն, սեր, ծուկ, գայլ

Ածանց

Օրինակին նայի՛ր և այդպես շարունակի՛ր.
փոքրիկ լիճ - լճակ
փոքրիկ ծուկ -
փոքրիկ նավ -
փոքրիկ շուն -
փոքրիկ արջ -
փոքրիկ գայլ -
փոքրիկ թռչուն -

Մեկ բառով գրի՛ր և վանդակները լրացրո՛ւ.
խելք չունեցող - անխելք
համ չունեցող - անհամ
գլուխ չունեցող -
տեր չունեցող -
շնորհք չունեցող -
ջուր չունեցող -
վերջ չունեցող -
ամոթ չունեցող -

Հոմանիշություն

Ո՞ր բառերը մոտ կամ նույն իմաստն ունեն.
օրինակ՝ քաջ-անվախ
սիրուն, ուրախ, լուսին, մեծ, արև, լուսամուտ, սպիտակ, աքաղաղ, առավոտ, գեղեցիկ, խոշոր, ճերմակ, աքլոր, պատուհան, զվարթ, արեգակ, լուսնյակ, լուսաբաց
Բառերն ընտրի՛ր և լրացրո՛ւ նախադասությունները:
Ես ամեն օր հեռուստացույց եմ .....:

տեսնում, նկատում, դիտում
Երբ բակից եկա, շորերս շատ ..... էին:
հստակ, ջինջ, մաքուր, վճիտ, պարզ, զուլալ
Մեր ուսուցչուհին շատ ..... էր խոսում:
գեղեցիկ, սիրունիկ, չքնաղ
Դու խելոք չես, շատ .....ես:
անպիտան, չար, վատ, դաժան

Գրի՛ր իմաստով մոտ զույգերը.
շոգ կրակ -
Ձախորդ Փանոս
հովն ընկնել -
միտքն ընկնել -
մտքից հանել -
մտքին դնել -
որոշել, հովանալ, ծախորդ մարդ, շատ շոգ, հիշել, մոռանալ:

Հականիշություն

Ինքդ էլ այսպիսի զույգեր կազմի՛ր՝ լավ - վատ
հիվանդ-
գեղեցիկ-
աշխատասեր-
արագ-
բարձր-
կարճ-
խելացի-
տխուր-
Ո՞ր բառերը հակառակ իմաստ ունեն.
գոհ, ցուրտ, ուշադիր, անհետաքրքիր, դառը, անուշադիր, բութ, հետաքրքիր, սուր, շոգ, դժգոհ, քաղցր

Իմաստաբանություն

Բառերը գտի՛ր և վանդակները լրացրո՛ւ.
1. Փոքրիկ, երկարականջ, վախկոտ կենդանի:
2. Մեծ, երկարականջ կենդանի, որը պատմություններում դմբո է ու իրասածի:
3. Փոքրիկ կենդանի, որը չի սիրում կատվին, որովհետև կատուն իրեն ուտում է:
4. Կենդանի, որին ծուռթաթ են ասում:
5. Տարվա եղանակ, որի մասին բանաստեղծն ասում է.
« Է՜յ կանաչ ախպեր,

Է՛յ ճանաչ ախպեր,
Արի՜, քեզ հետ բեր արևի շողեր,
Բեր անուշահոտ
Ծիլ, ծաղիկ ու խոտ...»:
6. Հեքիաթի հերոս, որը մի բան տալիս է, հետո փոշմանում, ետ է ուզում:

Այլմոլորակայինին փորձի՛ր բացատրել այս բառերը.
Նկար -
ջուր -
արև -
հեռախոս -

Ընդհանուր և մասնավոր անուններ

Բառերը տեղավորի՛ր երեք խմբերում՝ ***թռչուն, մարդ, ծառ****:*
արագիլ, տանձենի, արծիվ, գյուղացի, բարդի, բու, աշակերտ, խնձորենի, վարորդ, ընկուզենի, ծիտ, ուսուցիչ, ուռենի, ագռավ, երեխա, բազե, բժիշկ
Այդ խմբերում նոր բառեր ավելացնել կարո՞ղ ես: Փորձի՛ր:

Չևաբանություն

գոյական անուն
հատուկ գոյականներ

Մեր դասարանի աղջիկները
Անունները մեծատառո՞վ սկսեցիր: Շա՛տ լավ է:

Անուն դի՛ր այս կենդանիներին.
Կատվի, էշի, շան և ծիու անունները մեծատառո՞վ գրեցիր: Կեցցե՛ս:

Բառերը տեղավորի՛ր այս խմբերում՝ ***միրգ, բանջարեղեն, ծաղիկ****:*
Խնձոր, կաղամբ, նուռ, վարդ, գազար, տանձ, բազուկ, կակաչ, սոխ, խաղող, սխտոր, կարտոֆիլ, մանուշակ, դդմիկ, մեխակ, լոբի, շուշան, սալոր, վարունգ, ծնծաղիկ:
Փորձի՛ր նոր բառեր ավելացնել:

Ածական անուն

որակական ածականի համեմատության աստիճանները
Կիսատ նախադասությունները փորձի՛ր լրացնել.
Ծաղիկը գեղեցիկ է:
..... ծաղկից գեղեցիկ է:
Բայց ամենագեղեցիկը .....է:

Ի՞նչն է ամենաբարձրը.
Ծառը բարձր է:
Շենքն ավելի բարձր է:
Սարը շենքից բարձր է:
Ո՞րն է սրանցից ամենաբարձրը:
Ամենաբարձրը ..... է:

Ի՞նչն է աշխարհում՝
ամենաքաղցրը
Աշխարհում ամենաքաղցրը .....է:
ամենամեծը
Աշխարհում ամենամեծը .....է:
ամենահետաքրքիրը
ամենավատը
ամենաբարին
ամենաչարը
ամենափոքրը
ամենասուրը
ամենաչարաճճին

Այս շարքը շարունակի՛ր :

Շայնարկություն

Այստեղ ամեն ինչ խառնվել է, ճշտի՛ր, լա՞վ:
Զո՛ւ-զո՛ւ-զո՛ւ, հասե՞ք, հրդեհ է ընկել տունը:
Փիշի՛-փիշի՛, ինչո՞ւ ես ծառը կտրում:
Հե՛յ, ամբողջ նկարածս փչացավ:
Ախտ՜ս, եկեք կուտ տամ ձեզ:
Հայ հարա՛յ, արի քեզ մածուն տամ:

Նախադասությունները շարունակի՛ր այսպես՝
Շյունը ճռռում է՝ ճը՛ռռ-ճը՛ռռ:
Տերևները խշշում են՝
Քամին սուլում է՝
Թեյնիկը թշշում է՝
Առվակը քչքչում է՝
Նախադասություններն այսպե՛ս լրացրու.
Շունը հաչում է՝ հա՛ֆ-հա՛ֆ:
Ծաղկած այգում լսվում էր մեղուների ծայնը՝ .....:
Սենյակում տզզում էր մի ճանճ՝ .....:
Ի՞նչ է ուզում այս կատուն, անընդհատ մլավում է՝ .....:
Լուսաբացին աքաղաղը կանչում է՝ .....:
Ծիտը ծառին ծլվլում է՝ .....:

Կարո՞ղ ես շարունակել: Փորձի՛ր:
Ակսեները խոհանոցում չրխկում են՝ չրը՛խկ-չրը՛խկ:
Ամբողջ օրը փայտփորիկը թրխկացնում էր՝ թրը՛խկ հա թրը՛խկ:
Հեռախոսը զնգում էր՝
Մեղուները բզզում են՝
Ճանճերը տզզում են՝

ստացական հոդ
Շարունակի՛ր այսպես.
Ընկերս կամ իմ ընկերը:
Տետրս կամ .....
Խնձորս կամ .....
Քույրիկս կամ .....
Աթոռս կամ .....
Գիրքս կամ .....

Շարունակի՛ր այսպես.
Քո ատամները կամ ատամներդ:
Քո մազերը կամ .....
Քո դասընկերները կամ .....
Քո խոսքերը կամ .....
Քո նկարները կամ .....
Քո եղունգները կամ .....

Զույգ-զույգ գրի՛ր այն նախադասությունները, որոնք նույն միտքն ունեն:
Մայրիկս կանչում է ինձ:
Քո մայրիկը կանչում է քեզ:
Իմ մայրիկը կանչում է ինձ:
Մայրիկդ կանչում է քեզ:

Շարահյուսություն

Նախադասության կազմում
Բառերն առանձնացրո՛ւ, նախադասությունները գրի՛ր և կարդա՛:
Սուտասողիտունընկրակընկավչհավատացին:
Գյուղըորկանգնիգերանկկոտրի:

Մի նախադասությամբ սուտ հորինի՛ր:

Ի՞նչ կլիներ...
Եթե կախարդական փայտիկ ունենայի, ...
Եթե ձկները խոսել կարողանային, ...
Եթե մարդիկ թռչել կարողանային, ...
Եթե մկները կնճիթ ունենային, ...

Եթե բոլոր խաղալիքները կենդանանային, ...

Բառերը դասավորի՛ր այնպես, որ նախադասություն ստացվի:
գլխից, ծուկը, են, բռնում
հաշվում, ճտերը, են, աշնանն

Նախադասության համառոտում
Նախադասությունից բառեր հանի՛ր և երկու բառ թող այնպես, որ իմանանք, թե ինչը ինչ արեց:
Սոված, միայնակ գայլը ոռնաց ծորում:
ա) Հանի՛ր մի բառ:
բ) Հիմա մի բառ էլ հանի՛ր:
գ) Փորձի՛ր մի բառ էլ հանել:

Նախադասությունից բառեր հանի՛ր և երկու բառ թող այնպես, որ իմանանք, թե ով ինչ էր անում:
Ծեր, իմաստուն թզուկը ապրում էր հեռո՜ւ անտառում:
ա) Նախադասությունից մի բառ հանի՛ր,
բ) Մի բառ էլ հանի՛ր:
գ) Փորձի՛ր մի բառ ևս հանել:

Նախադասության ընդարձակում
Հարցերի պատասխանները գրի՛ր:
ա) Ինչպիսի՞ արևն է շողում:
.....արևը շողում է:
բ) Արևը ե՞րբ է շողում:
Արևը ..... շողում է:
գ) Արևը որտե՞ղ է շողում:
Արևը ..... շողում է:
*Հիմա քո գրած բառերով **Արևը շողում է** նախադասությունը լրացրո՛ւ:*
.....արևը .... շողում է:

***Ծառերը ծաղկեցին** նախադասության մեջ բառեր ավելացրո՛ւ:*
ա) Մի բառ ավելացրո՛ւ:
բ) Մի բառ էլ ավելացրո՛ւ:
գ) Կարո՞ղ ես մի բառ էլ ավելացնել:

Հարցական նախադասություններ
Սրանք պատասխաններն են: Իսկ հարցերն ինքդ գրի՛ր:
- .....
- Սովորում եմ երկրորդ դասարանում:
- .....
- Սիրում եմ բակում խաղալ:
- .....

- Չեմ սիրում, երբ ինձ վրա բարկանում են:
- .....
- Այո՛, ինձ շատ է դուր գալիս:
Հարցական նշանները դրեցի՞ր: Լա՛վ է:

Ընկերոջդ հարցեր գրի՛ր, տուր, թող պատասխանի:
Հարցական նշանները չմոռացա՞ր դնել: Հրաշալի՛ է:

Մեծերին հարցեր գրի՛ր:
Հարցական նշանները դրեցի՞ր: Ապրե՛ս:

Հրամայական նախադասություններ
Գրի՛ր այն հրամանները, որ տալիս է աշնան քամին:
Շեշտերը դրեցի՞ր: Շա՛տ լավ է:

Ինչ հրամաններ ուզում են՝ գրի՛ր:
Շեշտերի մասին չեմ հիշեցնում, գիտեմ, որ չես մոռացել:

Ի՞նչ է արգելում ուսուցիչը:
Մի՛ խոսիր:
Դասից մի՛ ուշանա:

Շարունակի՛ր:

Բացականչական նախադասություններ
Նախադասությունները լրացրո՛ւ:
Ծիտը ծառին ծլվլում է.
-
Բազեն գլխին պտտվում է.
-
Ծիտը լռեց, ծիտը վախեց.
-
- Բազե՛, թը՜ռռ, բազե՛, թը՜ռռ,
-
վա՜յ, վա՜յ, վա՜յ
ծի՜վ, ծի՜վ, ծի՜վ
հա՜յ, հա՜յ, հա՜յ
վո՜ւյ, վո՜ւյ, վո՜ւյ
Բարձրաձայն կարդա՛: Երկարացման նշանների մասին չմոռացա՞ր: Շա՛տ լավ է:

Դու ինչպե՞ս ես ուրախանում, զարմանում, տխրում, բարկանում, վախենում:
Գրի՛ր այդ նախադասությունները:
Երկարացման նշանները դրեցի՞ր: Լա՛վ է:

Բառերի շարադասություն
*Նախադասությանը **մեծ** բառն ավելացրո՛ւ այնպես, որ՝*
ա) շունը լինի մեծ
բ) ոսկորը լինի մեծ

Աղջիկը հեքիաթը պատմեց:
*Նախադասության մեջ **ուրախ** բառն այնպես ավելացրո՛ւ, որ՝*
ա) աղջիկն ուրախ լինի,
բ) հեքիաթն ուրախ լինի,
գ) պատմելն ուրախ լինի:

Այս բառերով քանի՞ նախադասություն կկազմես:
փոքրիկը, ուրախ, անծանոթին, ողջունեց:

Նախադասությունների շարադասություն
Այս նախադասությունները ճի՛շտ դասավորիր.
Այդ պատճառով էլ ես նրան Սևուկ եմ կանչում:
Ես մի փոքրիկ շուն ունեմ:
Ոչն ու թաթիկներն էլ են սև:
Նա շատ սև է:

Երկու պատմությունները խառնվել են: Օգնի՛ր բաժանելու:
Չմեռ է:
Արդեն դրսում շատ շոգ է:
Գյուղը ծածկվել է փափուկ ու սպիտակ ձյունով: Այս եղանակին երեխաները սիրում են լողանալ գյուղի փոքրիկ գետում:
Բակերում հայտնվել են ձնե մարդիկ:
Նրանք լողում են ու պառկում տաք ավազների վրա: Լսվում է ծնագնդիկ խաղացող երեխաների աղմուկ-աղաղակը:
Այնպես լա՛վ է ամռանը գետափին:

Նախադասության անդամներին տրվող հարցեր
Ի՞նչը ի՞նչ է անում:
Նախադասությունները լրացրո՛ւ: Շունը հաչում է:
Կատուն .....
Այծը .....
Խոզը .....
Մուկը .....
Գայլը .....

Հարցին պատասխանի՛ր.
Ինչպիսի՞ն է՝
Երկինքը .....

Կապիկը .....
Մութը .....
Մայրիկը .....
Դուռը .....
Ծիծեռնակը .....

Ինչե՞ր ի՞նչ են անում:
Նախադասությունները լրացրո՛ւ:
Ձիերը խրխնջում են:
.....ցատկոտում են:
.....ֆշշում են:
.....կտկտում են:
.....գլորվում են:
.....օրորվում են:

Կետադրություն

Վերջակետերով առանձնացրո՛ւ նախադասությունները.
ես շուն եմ պահում թռչունները ծլվլում են

Վերջակետերով առանձնացրո՛ւ նախադասությունները.
աքաղաղը ծուղրուղու է կանչում անտառի տնակում մի այծ է
ապրում ծմռանը սահնակներով սահում ենք

Նկարագրական շարադրություններ
Նկարը պատմի՛ր.
Ի՞նչ սենյակ է սա (ճաշասենյա՞կ , ննջասենյա՞կ , աշխատասենյա՞կ,
մանկակա՞ն սենյակ, թե՞ մի ուրիշ սենյակ): Ինչո՞ւ ես այդպես կարծում:
Ի՞նչ կա սենյակում (պատի վրայի քարտե՞զն էլ նկատեցիր):
Պատմի՛ր այս սենյակի տիրոջ մասին.
տղա՞ է, թե՞ աղջիկ
քանի՞ տարեկան է
ինչո՞վ է սիրում զբաղվել
ինչպիսի՞ բնավորություն ունի:

Ներկայացնում ենք այն ժամաքանակը, որն առաջարկվում է երկրորդ դասարանում լեզվաբանական նյութն անցնելու և լեզվական այլ աշխատանքների համար:

Հնչյունաբանություն (10 ժամ)
Հնչյուններ
էջեր՝ 8, 11, 18, 28, 36
31, 40, 62, 71
Այբուբեն
էջեր՝ 5, 18, 25
Ուղղագրություն
էջեր՝ 15, 21, 93
Օժանդակ բայի գրությունը
էջեր՝ 6, 6, 8, 49, 49, 49, 49, 50, 50, 50, 50, 51, 51, 51, 51
Վանկ
էջեր՝ 27, 34, 76
Կրկնություն՝ 2 դասաժամ

Բառագիտություն (11 ժամ)
իմաստաբանություն
էջեր՝ 24, 26, 39, 42, 64, 75, 86, 94
հոմանիշներ
էջեր՝ 16, 90, 91, 95
հականիշներ
էջեր՝ 75, 94
բառակազմություն
բարդ բառեր
էջեր՝ 5, 9, 16, 22, 29, 31, 37, 43, 53, 61, 62, 62, 73, 89
ածանցներ
էջեր՝ 10, 38, 84, 87, 94
Կրկնություն՝ 3 դասաժամ

Ձևաբանություն (10 ժամ)
գոյական անուն
հատուկ գոյականների գրությունը
էջեր՝ 3, 3, 7, 12, 14, 35
ընդհանուր և մասնավոր անուններ
էջեր՝ 23, 41,
ածական անուն
ածականների համեմատության աստիճաններ
էջեր՝ 54, 56, 59, 60, 81

ձայնարկություններ
էջեր՝ 57, 81, 82, 82, 83, 84
հոդեր
ստացական հոդ
էջեր՝ 7, 12, 29, 57, 67, 88
Կրկնություն՝ 3 դասաժամ

Շարահյուսություն (40 ժամ)
նախադասության կազմում
էջեր՝ 15, 17, 20, 20, 22, 23, 25, 25, 27, 29, 32, 40, 40, 42, 43, 45, 46, 48, 53, 54, 55, 55, 57, 68, 69, 69, 70, 82
նախադասության համառոտում
էջեր՝ 43, 46, 48, 53
նախադասության ընդարձակում
էջեր՝ 30, 33, 38, 56, 63, 86, 87
հարցական նախադասություններ
էջեր՝ 63, 70, 71, 72, 73, 76, 77, 80, 80
հրամայական նախադասություններ
էջեր՝ 83, 84, 84, 86, 87, 88, 88, 88, 89, 90
բացականչական նախադասություններ
էջեր՝ 78, 78, 81
բառերի շարադասություն
էջեր՝ 33, 34, 39, 41
նախադասությունների շարադասություն
էջեր՝ 46, 54, 55, 58, 72, 77, 91
նախադասության անդամներին տրվող հարցեր
էջեր՝ 9, 11, 13, 14, 17, 18, 19, 26, 30, 31, 32, 34, 36, 37, 47,
առոգանություն
էջեր՝ 79, 79, 79, 79
Կրկնություն՝ 4 դասաժամ

Կետադրություն (3 ժամ)
Վերջակետ
էջեր՝ 20, 30, 37, 60, 80, 89, 92

Նկարագրական և ստեղծագործական շարադրություններ (14 ժամ)
էջեր՝ 4, 11, 24, 28, 33, 36, 44, 45, 47, 52, 59, 61, 64, 65, 66, 67, 68, 69, 70, 74, 85, 90, 92, 95, 96

Ծրագրի յուրացման ստուգումը կատարվում է և՛ ուսումնական տարվա ընթացքում՝ որևէ թեմայի հետ կապված, և՛ ուստարվա վերջում: Դրանց համար կարող են օգտագործվել կրկնողության համար նախատեսված ժամերը:

Ստուգման օրինակներ

Հնչյունաբանություն
Բառերը գտի՛ր և վանդակները լրացրո՛ւ.
Թիվ, որը մեկից մեծ է, երեքից՝ փոքր:
Չիուկ-ձի, ձկնիկ-ձուկ, իշուկ-
Մարդ, որը կենդանիներ է որսում:
Լուսնյակ - լուսին, պատուհան-լուսամուտ, արեգակ-

Բառագիտություն
Ի՞նչն է կրկնվում այս բառերում: Գրի՛ր կրկնվող բառը:
դասընկեր, դասամիջոց, դասաժամ, դասամատյան, դասղեկ
Ան, իկ, ուհի, ենի մասնիկներն ավելացրո՛ւ բառերին և ստացի՛ր նոր բառեր.
ծիրան, գույն, քույր, աշակերտ
Բառերից մեկն ընտրի՛ր և գրի՛ր.
Ի՞նչ .....աչքեր ունես:
հսկա, մեծ, ածդահա
Չույգերով միացրո՛ւ հակառակ իմաստ ունեցող բառերը.
Գեղեցիկ, լավ, չար, բարձր, ներքև, արագ, սառը, հիմար
խելացի, բարի, տգեղ, դանդաղ, տաք, վերև, վատ, ցածր

Չևաբանություն
Գրի՛ր քեզ ամենաշատը դուր եկած 5 անուն (աղջկա, տղայի, կենդանու):

Շարահյուսություն
Նախադասություն կազմի՛ր ըստ տրված հարցերի.
Ինչպիսի՞ ո՞վ ի՞նչ է անում:
Նախադասության մեջ երկու բառ թո՛ւղ այնպես, որ իմանանք, թե ինչը ինչ է անում:
Ծիտը ծառին ուրախ ծլվլում է:
Նախադասությանը երկու բառ ավելացրո՛ւ:
Ծառը ծաղկեց:
Նախադասությունները ճիշտ դասավորի՛ր:
Իսկ քույրիկս դեռ դպրոց չի գնում:
Ես սովորում եմ երկրորդ դասարանում:
Նա հինգ տարեկան է:
Նախադասությունները վերջակետով առանձնացրո՛ւ:
ես շատ եմ սիրում գնդակ խաղալ քույրիկս սիրում է խաղալ տիկնիկով

Գնահատումը կատարվում է քսան բալանոց համակարգով, որը հետո ընդունված կարգով վերածվում է հինգբալանոցի:

1 հարցարանի օրինակ

1. Բառերը գտի՛ր և վանդակները լրացրո՛ւ.
Թիվ, որը մեկից մեծ է, երեքից՝ փոքր:
Ձիուկ-ծի, ձկնիկ-ծուկ, իշուկ-
Մարդ, որը կենդանիներ է որսում:
Լուսնյակ - լուսին, պատուհան-լուսամուտ, արեգակ-
(3 միավոր)

2. Ի՞նչն է կրկնվում այս բառերում: Գրի՛ր կրկնվող բառը:
դասընկեր, դասամիջոց, դասաժամ, դասամատյան, դասղեկ
(4 միավոր)

3. Գրի՛ր քեզ ամենաշատը դուր եկած 5 անուն (աղջկա, տղայի, կենդանու):
(5 միավոր)

4. Նախադասությունները ճիշտ դասավորի՛ր:
Իսկ քույրիկս դեռ դպրոց չի գնում:
Ես սովորում եմ երկրորդ դասարանում:
Նա հինգ տարեկան է:
(5 միավոր)

5. Նախադասությունները.վերջակետով առանձնացրո՛ւ:
ես շատ եմ սիրում գնդակ խաղալ քույրիկս սիրում է խաղալ տիկնիկով
(3 միավոր)

Գրագետ է այն մարդը, որ կարդում, հասկանում է կարդացածը, կարողանում է սեփական մտքերն ու գաղափարները, կարծիքը հստակ ձևակերպել հաղորդել, հասկանալ, հասկանալի լինել:

Այս հմտությունները հիմնականում դպրոցում են ձևավորվում: Այդ առումով հատկապես կարևորվում է կրտսեր դպրոցը (I-IV դասարաններ)՝ որպես հիմնադիր շրջան: Այդ և հետագա տարիներին մայրենիի խնդիրը խոսքի մշակումն է:

Երեխայի գլուխը «պատրաստի դեղատոմսեր» լցնելով այս խնդիրը անհնար է լուծել: Գիտելիքը՝ ստեղծման և կատարման արդյունք է: Խորասուզված աշխատելով, հայտնագործելով ու փորձ ձեռք բերելով՝ երեխան գրագետ է դառնում:

Հետևապես, մայրենիի դասը հայտնագործությունների ու փորձի ձեռքբերման, կատարելագործման դաս պիտի լինի:

Այդ ընթացքում պիտի իշխի ազատ, անկաշկանդ, ջերմ մթնոլորտ. աշակերտը պիտի վստահ լինի, պիտի համոզված լինի, որ իր կարծիքը կհարգվի, իր «հայտնագործությունները» կգնահատվեն, չպիտի վախենա սխալվելուց և, ինչու չէ, պիտի ազատվի որոշ բարդույթներից:

Մայրենիի դասը պիտի նպաստի երեխայի լեզվամտածողության և լեզվազգացողության զարգացմանը, պիտի տանի այն բանին, որ երեխան ընդունակ լինի ինքնուրույն լուծելու լեզվական ու մտավոր խնդիրներ:

Հասկանալի է, որ այդ ծրագրի իրագործողը մայրենիի ուսուցիչն է:

Մայրենիի ուսուցիչը

Ուսուցիչը նախ և առաջ դասի կազմակերպիչն է, նա ստեղծում է անհրաժեշտ աշխատանքային մթնոլորտ, որում ձևավորվում է իսկական ընթերցողը՝ ընդունակ բանավիճելու, փաստերը համադրելով կամ հակադրելով եզրահանգումներ կատարելու, ուշադիր լսելու դիմացինի խոսքը:

Ընթերցանության ժամին ուսուցիչը աշակերտի գործընկերն է և օգնականը:

Նրա կարևորագույն խնդիրներից մեկը երեխայի խոսքային ինքնարտահայտման պահանջմունքի պահպանումն ու զորացումն է: Երեխան պիտի

ազատորեն խոսի իրեն հուզող (գուցե և անհանգստացնող), հետաքրքրող թեմայից: Այդ դեպքում նա ցանկություն կունենա պատմել իր աշխարհի, սիրելի մարդկանց, իրերի, հետաքրքրությունների մասին, կուզենա խոսել ընթերցված նյութի շուրջ:

Մայրենիի ուսուցչի կարևոր խնդիրներից մեկն էլ երեխայի ստեղծագործական եզրակացության ու մտավոր կարողությունների զարգացումն է: Այսինքն, զրուցելիս, կարդացած նյութը քննարկելիս ոչ մի սահմանափակում չպիտի լինի: Ընդհակառակը, ուսուցիչը պիտի խրախուսի անսովոր, նույնիսկ վերացական պատասխանները, օգնի, որ երեխաները կարողանան դուրս գալ մեծերի ստեղծած կաղապարներից, կարողանան երևակայել և հորինել, շնչավորել անշունչը, մոտեցնել հեռուն, պատմական ժամանակները, մտքով տեղափոխվել այնտեղ, որտեղ անհնար է լինել, խառնել հեքիաթները... դասարանում կացինն ու հեռուստացույցը կարող են բարեկամանալ, բարությունը կարող է հյուր գնալ կամ ծիծաղել, անցյալը կարող է այցելել ապագա...

Որպեսզի իրագործվի անիրագործելի թվացողը, ուսուցիչը պիտի խթանի երեխայի երևակայությունը, թույլ տա, որ նրա միտքն աշխատի և երբեք չասի.

- Այդպես չի լինում:

Ուսուցիչը պետք է կարևորի նաև մտքի հստակ արտահայտման անհրաժեշտ հմտությունների մշակումը: Նա պիտի օգնի, որ երեխաները քիչ-քիչ ազատվեն ավելորդաբանություններից, կարողանան իրենց ասելիքը ավելի հակիրճ ձևակերպել:

Երեխաները սեփական մտքերին մի քանի անգամ անդրադառնալու, խմբագրելու սովորություն պիտի ձեռք բերեն: Սա, իհարկե, դժվար աշխատանք է և ժամանակ է պահանջում: Դրան օգնում է նաև աստիճանաբար մեծացող լեզվական և մտավոր պաշարը:

Խորհուրդ տվեք, որ գրելուց առաջ լավ մտածեն, գրելուց հետո մի անգամ էլ կարդան գրածը, ուղղեն սխալները, օղակի մեջ վերցնեն ավելորդ բառերը կամ արտահայտությունները: Որոշ դեպքերում կարելի է խմբագրել ամբողջ դասարանով. բայց, իհարկե, դա չպիտի վնասի հեղինակի մտքի զգացողությանը:

Ուսուցչի կարծիքը ընդամենը կարծիքներից մեկն է. դասարանում յուրաքանչյուրն ունի իր սեփականը՝ իր բացատրությամբ:

Եթե հարցը կամ առաջադրանքը միանշանակ պատասխան է ենթադրում, իսկ աշակերտը սխալվել է, ուսուցիչն, իհարկե, անպայման ուղղում է սխալը, նաև՝ պատճառաբանում այն:

Բոլոր դեպքերում, ուսուցիչը պիտի աշխատի, որպեսզի դասի ժամանակ երեխաները մտածեն, հայտնագործեն, եզրահանգումներ անեն, փորձ ձեռք բերեն:

Մայրենիի ընթերցարանները

Եթե կենսական սնունդը որոշակի տարիք է ակնկալում, ապա հոգևոր սննդի հարցում առավել ևս պիտի զգույշ լինել: Երեխան պիտի կարդա իր ներքնաշխարհին հարազատ, ընկալելի, իր տարիքին համապատասխան ստեղծագործություններ:

Ընթերցարանի նյութերն ընտրվել են այդ սկզբունքով՝ հաշվի առնելով նրանց տարիքային առանձնահատկությունները, նրանց հակումներն ու հետաքրքրությունները:

Ոչ գեղարվեստական (վավերագրական, բնագիտական) տեքստերը լրացնում են գեղարվեստական ստեղծագործությունները. ավելի հաճախ դրանք պարզաբանում են ուսուցանվող նյութը:

Ընթերցարանի բովանդակությունը օգնում է, որ կրթվի երեխաների գեղարվեստական ճաշակն ու մտածողությունը, զարգացնում է նրանց երևակայությունն ու տրամաբանությունը:

II դասարանի ընթերցարանը ևս կազմված է գիրք-տետրի սկզբունքով (ինչպես I և III դասարաններում): Այսինքն՝ այն և՛ ընթերցարան է, և՛ հարցարան, և՛ տետր:

Գիրք-տետրը մի շարք առավելություններ ունի: Նրանով աշխատելիս աշակերտը ինքնուրույն է, իր մտքերի, խոհերի հետ: Նա ոչ միայն ինքնուրույն աշխատել է սովորում, այլև ստիպված է լուծումներ փնտրել, վճիռներ կայացնել:

Դասագիրքը դառնում է մտերիմ զրուցակից:

Աշխատելով՝ II դասարանցին միաժամանակ շարունակում է սեփական դասագրքի ստեղծումը, դառնում համահեղինակ, որովհետև հենց այդտեղ է նա գրում իր ստեղծագործությունները, հարցեր է առաջադրում, նկարում, ներկում, ձևավորում ազատ էջերը:

Գիրք-տետրը հեշտացնում է ուսուցչի աշխատանքը, քանի որ նա յուրաքանչյուր աշակերտի հետ անհատապես աշխատելու հնարավորություն է ստանում. երեխաների ունակությունների տարբերությունները չեն խանգարի դասի կազմակերպմանը:

Կարդալու մասին

Մենք դեմ ենք նյութը մի քանի անգամ աննպատակ կարդալուն. դա անհետաքրքիր ու ձանձրալի զբաղմունք է երեխայի համար:

Առանց որոշակի նպատակի բարձրաձայն ընթերցումը ևս անօգուտ և անիմաստ զբաղմունք է, պարզապես ժամանակի կորուստ:

Երեխան պիտի վարժվի մտքում կարդալուն և կարդացածը հասկանալուն: Այդ նպատակով էլ ընթերցարանում նյութերը հիմնականում դասավորված են ըստ ծավալի (բացառություններ, իհարկե, կան):

Սա չի նշանակում, թե դասարանում աշակերտը ընդհանրապես բարձրաձայն չպիտի կարդա:

Բարձրաձայն կարդում են դիմացինին ինչ-որ բան (սեփական ստեղծա-

գործությունը, գաղափարը, միտքը, խոսքի հաստատումը) հաղորդելու համար: Այս դեպքում երեխային կարելի է առաջարկել՝ նախքան ընթերցելը ստուգել, կարողանո՞ւմ է ինքը սահուն կարդալ, որ ուրիշները կարողանան լսել իրեն: Եթե վարժ չի կարդում, ուրեմն ընթերցվելիք նյութը նախապես մի քանի անգամ մտքում կարդալը իմաստ ունի: Աշակերտը պիտի իմանա, որ բարձրաձայն կարդալը բեմ ելնելու նման բան է:

Նշենք, որ ընթերցարանով աշխատելու ժամանակ, առաջադրանքների մի ամբողջ խումբ կատարելու համար աշակերտը, կամա թե ակամա, մի քանի անգամ պիտի անդրադառնա ընթերցված նյութին, որն էլ կնպաստի դրա յուրացմանը:

Դասի կազմակերպումը

Նշենք՝ ընթերցարանի նյութը հիմնականում ընթերցվում է դասի ժամանակ: Բացառություն կարող են կազմել ծավալուն գործերը: Եթե ուսուցիչը համոզված է, որ այդ ստեղծագործության ընթերցումը շատ ժամանակ կխլի, կարող է հանձնարարել, որ տանն ընթերցեն: Սակայն դա հաճախակի չպիտի լինի:

Ուսուցիչը երեխաներին նախապես ծանոթացնում է (մի երկու խոսքով) ընթերցվելիք ստեղծագործությանը, նրա հեղինակին և հանձնարարում ընթերցել այն (իհարկե մտքում, կամ գոնե՝ շշուկով):

Հասկանալի է, որ ընթերցումը բոլորը միաժամանակ չեն ավարտի: Աշակերտները պիտի վարժվեն. եթե ոմանք ընթերցելը մյուսներից շուտ են ավարտել, փորձեն մտքում հիշել հերոսներին, գործողությունները, ինչի կամ ում մասին է պատմությունը, մի անգամ էլ անդրադառնան բացատրվող բառերին:

Եթե ամեն ինչ կարգին է, նրանք հանգիստ կարող են ներկել տվյալ ստեղծագործությանը կցված նկարները, կարող են դետալներ, դրվագներ ավելացնել, եթե դրա հնարավորությունը կա:

Երբ դասարանի մեծագույն մասն ավարտում է ընթերցումը, հարցերով կարելի է ստուգել, որքանո՞վ են հասկացել կարդացածը.

Վերնագիրը հիշո՞ւմ եք:
Թվեք հերոսներին (կամ՝ ովքեր կային...):
Ինչի՞ կամ ո՞ւմ մասին էր:

Աշակերտներին ուղղություն տալու նպատակով կարելի է բանավոր կատարել դասագրքի այն առաջադրանքները, որոնք կոնկրետ պատասխան են ենթադրում:

Գրե՛ք՝ այս պատմության մեջ ինչպիսի՞ն են՝
ճառագայթները, արևը, ծաղիկները, խոտը, օդը, կանաչուտը: («Արևի ճառագայթները»)
Այս բանաստեղծության մեջ մանուկը ի՞նչ հարցեր է տալիս ջրին: («Մանուկն ու ջուրը»)

Երբ ուսուցիչը համոզվում է, որ երեխաները հասկացել՝ են կարդացածը, պատրաստ են աշխատելու, հանձնարարում է կատարել գրավոր առաջադրանքները: Քանի որ I դասարանում նրանք նույն սկզբունքով են աշխատել, կարծում ենք՝ դժվարություններ առանձնապես չեն լինի: Երբ երեխաներն աշխատում են, ուսուցիչը շրջում է դասարանում, ուղղում երեխաների սխալները, օգնում դժվարացողներին:

Հասկանալի է, որ մի դասի ընթացքում ոչ ոք չի ավարտի աշխատանքը: Հաջորդ օրը ուսուցիչը թեթևակի հիշեցնում է նախորդ օրվա նյութը և հանձնարարում շարունակել աշխատանքը:

Երբ երեխաներն ավարտում են գրավոր առաջադրանքների կատարումը (2-3 երեխա միշտ կարող են չհասցնել), ուսուցչի օգնությամբ ստուգում են իրենց գրածի ճշտությունը՝ բարձրաձայն կարդալով:

Ի՞նչ եք գրել այս հարցին պատասխանելիս՝ «Այս նախադասություններն արտագրի՛ր՝ դասավորելով դրանք ըստ դեպքերի հաջորդականության»:
Հասկանալի է, որ պատասխանը միայն այսպիսին պիտի լինի.
Գյուղացիները կացինը վերցրեցին:
Տանուտերը կացնով ոտքը կտրեց, որովհետև օգտագործել չգիտեր:
Գյուղացիները հավաքվեցին՝ և կացնին ծեծեցին, բայց օգուտ չտվեց:
Ստիպված կացինը վառեցին, և այն տաքացավ ու կարմրեց:
Տաքացած, բարկացած կացինը գցեցին մարագը, մարագը վառվեց:

Նման առաջադրանքների պատասխանը, հասկանալի է, որ մի հոգի պիտի կարդա, մյուսները կստուգեն իրենց գրածը: Այս առաջադրանքները, հարցերը, որոնք անհատական, ստեղծագործական մոտեցում են պահանջում, որոնց պատասխանները բացարձակապես միանման չեն կարող լինել, ավելի հետաքրքիր են, երեխաները դրանք մեծ սիրով են կարդում:

Քո կարծիքով, ինչո՞ւ է ամպը սարին պապի ասում: («Ամպն ու սարը»)
Ինչպիսի՞ն են այս հեքիաթի իսկական մկները: Ինչո՞ւ ես այդպես կարծում: («Գրքից փախած մկնիկը»)
Հորինի՛ր.
«Տարօրինակ հեռուստացույցը»:
«Ինչ պատահեց, երբ ծաղիկները ձմռանն արթնացան»:
«Ի՞նչ կպատմեիր սուտլիկ որսկանի մասին, եթե նրա ընկերը լիներիր» («Սուտլիկ որսկանը»):

Բոլորին պիտի հնարավորություն տալ ընթերցելու իր կարծիքը, իր ստեղծագործությունը, իր հորինածը և, եթե անհրաժեշտ է, նաև քննարկել: Այս ամենից հետո սկսվում է բանավոր զրույցը:

Հասկանալի է, որ հնարավոր չէ ստեղծագործությանը վերաբերող բոլոր հարցերը զետեղել գրավոր առաջադրանքներում:

Գրավոր առաջադրանքներ

Ընթերցարանի գրավոր առաջադրանքները բազմազան են: Օգտագործված են գրավոր աշխատանքի բոլոր տեսակները՝ արտագրություն, ինքնաթելադրություն, փոխադրություն, շարադրություն և այլն:

Առաջադրանքները պայմանականորեն խմբավորվում են ըստ նպատակների: Դրանց առաջին խմբի խնդիրը բառապաշարի հարստացումն է:

Շարունակի՛ր
անհայտ աստղ խայտաբղետ ծաղիկներ
անհայտ - խայտաբղետ -
- սվսվալ անհետ -

Ի՞նչ է նշանակում.
Վա՜յ իմ գլխին -
գլուխն ազատել -
ճար գտնել -
իմաց տալ -
Հեքիաթում ի՞նչ է գրված այս նախադասությունների փոխարեն:
Մի անգամ աղվեսը գալիս է մարգագետին:
- Հիմա ձեզ հերթով կուտեմ:

Եթե ուսուցիչը անհրաժեշտ կհամարի, այդ առաջադրանքների դժվար հասկանալի բառերն ու արտահայտությունները կարող է նախապես բացատրել, սակայն դա մշտական բնույթ չպիտի կրի, չէ՞ որ երեխաների բառապաշարը տարբեր է. նրա՛ն պետք է օգնել, ով դրա կարիքն ունի:

Այս առաջադրանքները ճշգրիտ պատասխան են պահանջում. սխալ պատասխաններն անպայման պիտի ուղղվեն:

Առաջադրանքների մի մեծ խումբ ուղղված է գեղարվեստական ստեղծագործության համակողմանի յուրացմանը, որը, անշուշտ, կնպաստի աշակերտի գրական ճաշակի ձևավորմանը: Նա դուրս է գրում հաջողված պատկերներն ու նկարագրությունները, դիպուկ բնութագրությունները՝ ավելի լավ յուրացնելով տեքստը: Այս առաջադրանքները միաժամանակ երեխայի ուշադրությունը կենտրոնացնում են որոշ հատվածների վրա. նա սովորում է մասը տեսնել ամբողջի մեջ, գլխավորը երկրորդականից տարբերել, ուշադիր լինել կարդացածի նկատմամբ:

Այնուհետև նա պատմում է որոշ հատվածներ՝ ականատեսի, որևէ հերոսի, առարկայի անունից: Այս դեպքում պիտի հուշել, որ տվյալ հերոսի վերաբերմունքը իր պատմածի նկատմամբ կարևոր է:

Ճպուռն ինչպե՞ս կպատմի իր հետ պատահածի մասին: Նա, իհարկե, կարդարանա, կմեղադրի մրջյունին:
Այսպես՝ ես սիրում եմ երգել, թռչել, թռվռալ: Շատ ընկերներ ունեմ: Նրանց հետ ամբողջ ամառը երգեցի, պարեցի: Ես այնքան ուրախ էի ու երջանիկ, որ մոռացել էի ձմռան մասին. չգիտեի էլ, որ ձմռանն այդքան ցուրտ կլինի: Ու ձմեռը եկավ: Ես դողում էի ցրտից: Ծանր-ծանր սողալով գնացի մրջյունի մոտ: Հույս ունեի, որ նա ինձ կօգնի. չէ՞ որ իմ սանամերն է: Իսկ նա չնայեց էլ ինձ վրա, թողեց, որ սառչեմ, որովհետև ամռանը իր նման չէի աշխատել:

Համակողմանիորեն յուրացնելով ստեղծագործությունը, երեխան ավելի արագ և հեշտությամբ է կատարում հաջորդ առաջադրանքները՝ համեմատել, հետևություններ անել, իր վերաբերմունքն արտահայտել:

Այս խմբի հարցերի պատասխանները խիստ անհատական ու բազմազան են լինելու: Ուսուցիչը պիտի տեսնի և խրախուսի անսովոր, յուրօրինակ, լեզվական առումով հետաքրքիր պատասխանները:

Ամփոփման կամ բանավոր զրույցի ժամանակ ուսուցիչը իր կարծիքն էլ կասի, բայց այն պարտադրվող, անառարկելի չպիտի լինի:

- Դու այսպես ես կարծում, իսկ ես այսպես:

Բոլոր դեպքերում ուսուցիչը պիտի հետևի, որ երեխաները չշեղվեն ստեղծագործությունից, եզրակացություններ անեն տեքստից ելնելով, հաշվի առնելով փաստերը. երբեմն նրանք ոգևորվում են, այնպիսի մտքեր արտահայտում, որ կապ չունեն ստեղծագործության հետ:

Առաջադրանքների մի խումբ էլ ուղղված է ստեղծագործական երևակայության զարգացմանը: Կարևորվում են աշակերտի կենսափորձի, ապրումների հետ կապված աշխատանքները՝ շարադրություններ, նկարագրություններ, տպավորությունների շարադրանք:

Ընթերցարանով աշխատելիս աշակերտները նամակներ, հրավերներ, հայտարարություններ են գրում, ցավակցում, մխիթարում, խրախուսում, շնորհավորում հերոսներին, խորհուրդներ տալիս, մեղադրում կամ արդարացնում նրանց:

Պույ-պույ մուկիկի անունից բարեկամներիդ հրավիրի՛ր կոկոսից դուրս գալը նշելու:

Դ. Դեմիրճյան. «Պույ-պույ մուկիկը»

Տատիկի և պապիկի անունից հայտարարություն գրի՛ր բոքոնիկի կորչելու մասին: Հայտարարությունը կարդալուց հետո աղվեսն ի՞նչ կգրի տատիկին ու պապիկին:

Ռուս ժող. հեքիաթ. «Գնդիկ-բոքոնիկ»

Հորինի՛ր.
Երգող ծառերի անտառում:

Այս առաջադրանքները կատարելիս ի հայտ է գալիս և դրսևորվում երեխայի մտածողության առանձնահատկությունը:

Նա ի՛նչ գրում է, դա է ճիշտը, քանի որ ինքն այդպես է մտածում, այդպե՛ս է կարծում, տեսնում, զգում:

Նյութն ավարտելուց հետո (որպես ամփոփում) երեխաներն իրենց գործերը կկարդան ընկերների և ուսուցչի համար:

Չափածո ստեղծագործություններ

Բանաստեղծությունը նախ ներկայացնում է ուսուցիչը (ասմունքում է): Հետո դասարանին առաջարկվում է ուշադիր կարդալ՝ պատրաստվելով ասմունքի. նախապես որոշել՝ ինչ տոնով՝ պիտի արտասանեն, ո՛ր բառերը կամ հատվածը պիտի շեշտեն և որտեղ՝ դադար տան: Հետո ամեն մեկը բանաստեղծությունը կարդում է ի՛ր մեկնաբանությամբ. նա ասմունքում է ընկերների և ուսուցչի համար:

Այնուհետև կատարվում են գրավոր առաջադրանքները:

Չափածո ստեղծագործությունների առաջադրանքները կատարելիս երեխաները հաճախ են նկարում: Դա ինքնանպատակ չէ: Նկարելու համար երեխան ավելի ուշադիր պիտի կարդա բանաստեղծությունը, տեսնի պատկերները: Նկարի միջոցով, նույնիսկ ենթագիտակցորեն, նա վերարտադրում է ի՛ր զգացածը:

Աշակերտը պիտի փորձի նաև բացատրել որոշ հատվածներ՝ ըստ ի՛ր ընկալման. դրանք հիմնականում երկտող կամ քառատող պատկերներ են, որոնց վրա, ըստ մեզ, պիտի հրավիրել նրա ուշադրությունը:

Բանաստեղծությունից առանձնացնելով գույն ունեցող տողերը՝ երեխան տեսնում է գույն-պատկեր կապը:

Բանավոր աշխատելիս նախ բանաստեղծությունը արձակ են շարադրում: Հետո համեմատում են 2 տարբերակները (չափածո և արձակ):

Կարող են փոխել որոշ մակդիրներ՝ իրենց հոմանիշներով, և դարձյալ համեմատում բնագրի հետ: Ո՞րն է ավելի գեղեցիկ, հաջողված, պատկերավոր:

Տնային աշխատանքներ՝

II-III դասարաններում դասագրքից տնային աշխատանք չի տրվում:

Սակայն, եթե II դասարանի՝ հանձնարարված ստեղծագործությունը ծավալուն է, ժամանակ շահելու համար կարելի է հանձնարարել, որ այն կարդան տանը:

Կամ՝ եթե դասարանի մեծ մասը ավարտել է նյութի հետ կապված աշխատանքը, կարելի է հետ մնացողներին հանձնարարել, որ աշխատանքն ավարտեն տանը:

Տանը երեխաները կարող են նամակներ գրել (տնօրենին, ուսուցչին, ինչ-որ մեկին), բացիկ-շնորհավորագրեր պատրաստել իրենց ընկերների կամ ընկերուհիների ծննդյան օրվա, որևէ տոնի առթիվ, ձեռագիր գրքեր հրատարակել, լրագրեր ստեղծել՝ ուսուցանվող թեմայի հետ կապված: Օրինակներ:

Նրանք կարող են անհատական, ընտանեկան կամ դասարանական լրագրեր ստեղծել:

Իհարկե, ամենօրյա տնային առաջադրանքներն ընդունելի չեն:

Բանավոր աշխատանք

Գրավոր աշխատանքների քննարկումից հետո պիտի անցնել բանավոր աշխատանքներին: Սա ոչ թե ամփոփում է, այլ աշխատանքի կազմակերպման այլ ձև:

Նախ՝ աշակերտները պետք է պատճառաբանեն հեղինակի ընտրած վերնագիրը:

Հետո իրենց վերնագիրը կառաջարկեն: Այնուհետև կխոսեն ստեղծագործության հերոսների մասին՝ ովքե՞ր են, որտեղի՞ց են հայտնվել տվյալ ստեղծագործության մեջ, ուրիշ ո՞ր ստեղծագործության մեջ կարող են լինել:

Հետաքրքիր է, երբ երեխաներն իրենց համեմատում են ստեղծագործության հերոսների հետ. այդ միջոցով նրանք փորձում են ճանաչել իրենք իրենց, գնահատել իրենց արարքները:

Հարցերը պետք է ձևակերպել այսպես.

Հերոսն ինչո՞վ է ձեզ նման:

Հերոսն ինչո՞վ է տարբերվում ձեզանից:

Նրա (նրանց) փոխարեն դուք ինչպե՞ս կվարվեիք:

Հարցերի մի մասի նպատակը անսովոր իրավիճակների ստեղծումն է. նոր հերոսի հայտնվելը հեքիաթում, հերոսների դերերի, հանգուցային լուծումների փոփոխելը:

Եթե կացնի փոխարեն՝

ա) հեռուստացույց,

բ) հեռախոս լիներ, հեքիաթն ինչպե՞ս կշարունակվեր:

Եթե գյուղում հայտնի սուտասան ապրեր (ասենք՝ սուտլիկ որսկանը), ի՞նչ կպատմեր այս դեպքի մասին:

Հ.Թումանյան. «Կացին ախպերը»

Եթե կատուն չմտածեր էլ մկանը չորացնելու մասին, մուկն ինչպե՞ս կազատվեր կատվից. նոր շարունակություն հորինե՛ք:

Հայ ժող. հեք. «Խմած մկան պայմանը»

Եթե մութ ամպիկը չլսեր արևին, ի՞նչ կլիներ (ասենք՝ արևը ինչ-որ մեկին օգնության կկանչե՞ր):

Եթե արևը բարկանար, ի՞նչ կլիներ:

Ղ.Աղայան. «Արևի հրամանը»

Հորինե՛ք նոր պատմություն բալզաթցիների մասին, թող նրա՛նք որոշեն՝ կապիկներին և մողեսներին ընտանի դարձնել:

Ֆրանսիական հեք. «Ճանապարհորդություն դեպի լուսին»

Նոր հեքիաթ հորինե՛ք. «Բաժակի մեջ»:

Նոր հերոսի հայտնվելը հեքիաթում.

Ծիտը դես է թռել, դեն է թռել, հայտնվել է «Գնդիկ-բոքոնիկ» հեքիաթում և

ճանապարհին հանդիպել գլորվող գնդիկ-բոքոնիկին:

Հիմա փորձե՛ք պատմել այս «Գնդիկ-բոքոնիկը», որի մեջ ծիտն էլ կա:

Կամ՝ Կառլսոնը հայտնվել է «Ոչ մի բանից մարդուկը» հեքիաթում, բարեկամացել է մարդուկի հետ:

Աշխատանքի մյուս տեսակը ստեղծագործության ավարտի փոփոխումն է:

- Ճիպոտն ի՞նչ է, որ,- չրթչրթաց թռչնակն ու դարձավ եկած ճանապարհով:

Այստեղից ինքներդ հորինե՛ք շարունակությունը:

Երեխաները կարող են նաև այսպես շարունակել.

Ծիտը դես է ման գալիս, դեն է ման գալիս, Աստծո ասած ճիպոտը չի գտնում: Տխուր-տրտում նստում է մի ցանկապատի ու միտք անում: Հանկարծ ցանկապատի ճիպոտներից մեկը լեզու է առնում ու ասում.

- Ի՞նչ է եղել, ա՛յ Չափարծիտ...

Հեքիաթի շարունակում.

Շարունակե՛ք «Բարակ թել» հեքիաթը:

Ստեղծագործության մեջ եղող առարկաների կենդանացում և կերպավորում.

«Պույ-պույ մուկիկի» կոկոսի ծառը նայում է ընկած կոկոսին ու մտածում.

«Այս ի՞նչ ամուր կոկոսներ են աճում ինձ վրա»: Հետո դիմում է Պույ-պույին.

- Լսի՛ր, եղբա՛յր Պույ-պույ, ուզո՞ւմ ես մի ուրիշ կոկոս գցեմ....

Ի՞նչ կլիներ, եթե...

Եթե մութ ամպիկը չլսեր արևին, ի՞նչ կլիներ:

Եթե կացինը լեզու առներ ու խոսեր:

Բավականին հետաքրքիր աշխատանք է հեքիաթների աղցան կազմելը: Սկզբնական շրջանում ուսուցիչը իր օրինակը պիտի պատմի (կամ կարդա) երեխաներին: Կարելի է՝ ասենք այսպես՝

Հորս ծնունդով, մորս կնունքով վեր կացանք մի օր, հինգ ու վեց հոգով, թրով-թվանքով որսի գնացինք: Գնացի՜նք, գնացի՜նք, շատ թե քիչ, մին էլ տեսնենք մի պառավ փետի է ման գալիս՝ թոնիր վառի: Մին էլ թռան եկան երեք ծիտ, երկուսը՝ սատկած, մնի բերանումն էլ իսկի շունչ չկա: Էս անշունչ ծիտը թե՝

- Ով էնպես սուտ ասի, որ ես ասեմ՝ սուտ է, թագավորությանս կեսը կտամ նրան:

Գալիս է մի աղքատ գյուղացի՝ կոտը կռնատակին:

- Տո՛, եկե՛ք, տեսե՛ք, կացին ախպերն ինչ արեց:

Շարունակությունը երեխաները պիտի հորինեն:

Կարելի է մեկ այլ տարբերակ առաջարկել, որտեղ արդեն հատվածների միջև մտքի կապը պարտադիր չէ:

Լինում է, չի լինում՝ մի պառավ: Էս պառավը իր էծը կթում է, կաթը վեր դնում, գնում ցախ ու փետ բերի, որ կրակ անի, կաթն եփի:

Ծիտը գնում է, ետ գալիս, թե՝ փուշը ետ տուր ինձ:

Իր մարդկանցով գնում է, որ հանի բերի: Գնում է կարասի բերանը բաց անել է տալիս, տեսնում է՝ ծմեռն էս աղքատ հողագործի եզները սատկում են:

- Ներողությո՛ւն, թագավոր, ես վաղ պիտի գայի, ուշացա: Մի մարդ գնաց հեռու երկիր՝ աշխատանք անելու:

- Սրա ընկերն էլ երևի իր նման մի աքլոր կլինի, էս էլ իմ ճաշը...

Կստացվի ուրախ հորինվածք, գուցե՝ անհեթեթություն, բայց կարևորն արդյունքն է՝ երեխան ազատ խաղում է նյութով, զարգացնում է երևակայությունը, մտածողությունը դուրս է գալիս կաղապարներից:

Սկզբնական շրջանում աղցան կկազմեն միայն 2 հեքիաթով: Հետո «օգտագործվող» հեքիաթների թիվն իրենք՝ աշակերտները, աստիճանաբար կավելացնեն: Սա կարող է նաև լավ տնային առաջադրանք լինել: Երեխաներն այդ աղցաններով փոքրիկ գրքույկներ կկազմեն՝ իրենց ձևավորումներով: Եթե դրան ընտանիքի մյուս անդամներն էլ մասնակցեն, հրաշալի կլինի:

Ահա բանավոր առաջադրանքների մի քանի ամբողջական նմուշ.

Ղ.Աղայան. «Արևի ճառագայթները»

1. Ինչո՞ւ է Ղ.Աղայանը ստեղծագործությունն անվանել «Արևի ճառագայթները»:

2. Ուրիշ վերնագիր հորինե՛ք այդ ստեղծագործության համար:

3. Թվե՛ք այդ ստեղծագործության հերոսներին կամ՝ ովքեր կան այս պատմության մեջ:

4. Որտե՞ղ են նրանք ապրում:

5. Այդ հերոսներից ո՞րը ձեզ ամենից շատ դուր եկավ:

6. Եթե արևի ճառագայթները ընկնեին բոլորի վրա, բայց ոչ մեկը չարթնանար, ի՞նչ կլիներ:

7. Ի՞նչ են մտածում մեղրածոր խոտերը, երբ լույսը բացվում է:

8. Շարունակե՛ք պատմությունը.

Մի ճառագայթ էլ ընկավ ծույլ ճպուռի վրա:

Ղ. Աղայան. «Արևի հրամանը»

Առաջին հինգ հարցերը կրկնվում են:

6. Եթե մութ ամպիկը չարաճճի լիներ, ի՞նչ կաներ:

Ըստ նկարի պատմե՛ք գարնանային սիրուն առավոտի մասին: (Ուշադիր նայե՛ք խխունջին և մրջյուններին)

7. Հիմա այս պատմության ժամանակը փոխե՛ք՝ գարնանային մի սիրուն երեկո լուսինը դուրս եկավ և ասաց արևին...

«Ամպի երեխաները»

Դարձյալ առաջին հինգ հարցերը կրկնվում են:

6. Դրանցից ո՞րն է իր բնավորությամբ ձեզ նման:

7. Գարնանային կարկուտը չարաճճի է, ճի՞շտ է: Նա այդպես է ստեղծված, ուրիշ բան անել չի կարող:

Ի՞նչ խորհուրդ կտաք նրան:

«Ուսումնարան»

6. Հիշո՞ւմ եք այն օրը, երբ առաջին անգամ դպրոց եկաք. պատմե՛ք այդ օրվա մասին:

7. Ձեզ երբևէ պատժե՞լ են. ինչի՞ համար. պատմե՛ք այդ մասին:

«Չափարծիտ»

6. Հավանեցի՞ք Չափարծիտին:

7. Փորձե՛ք նրան նկարագրել:

8. Կարդացե՛ք ամենագեղեցիկ հատվածը:

9. - Ճիպոտն ի՞նչ է որ,- չրթչրթաց թռչնակն ու դարձավ եկած ճանապարհով: Այստեղից ինքներդ հորինե՛ք շարունակությունը:

Հ.Թումանյան. «Գետակը»

Որտեղի՞ց է գալիս գետակը:

Ինչպիսի՞ն է այս գետակը:

Էլ ի՞նչ գործեր կարող է անել գետակը:

Գետակները ե՞րբ են ծուլանում:

Եթե գետակը չարաճճի լիներ, ի՞նչ կաներ ճանապարհին:

Էլի ի՞նչ գետ կամ գետակ կարող է լինել (ուրախության, ծիծաղի, բարության):

Ե՞րբ կարող է քարերի գետ առաջանալ:

Դ.Բիսեթ. «Գորգի տակ»

Վագրն ու ձին որտեղի՞ց էին հայտնվել գորգի տակ:

Նրանք ինչպիսի՞ հյուրեր էին սիրում:

Ձեր կարծիքով՝ վագրն ինչո՞ւ էր ուզում ժամն իմանալ:

Ինչպիսի՞ն է երևակայական անձրևը:

Երևակայական անձրևանոցը ինչպիսի՞ն է:

Ինչպիսի՞ն է երևակայական խռմփոցը:

Եթե մայրիկի ավելն էլ երևակայական լիներ, ի՞նչ կլիներ:

Ո՞ւր էին գնացել ձին ու առյուծը, որ վերջում աղջիկը նրանց իր տետրում նկարեց:

Որտե՞ղ են ապրում բոլոր երևակայականները:

Նրանք ինչո՞վ են տարբերվում «սովորականներից»:

Կ.Չուկովսկի. «Ճուտիկը»

Ճուտիկը դուր եկա՞վ ձեզ: Ինչո՞ւ: Ինչո՞վ է նա ձեզ նման և ինչո՞վ՝ տարբեր:

Ինչո՞ւ է ճուտիկը կարծում, որ ինքը մեծ է:

Ինչպիսի՞ն էր աքլորը:

Ինչպիսի՞ն էր ճուտիկը:

Այս դեպքերից հետո եթե գորտը գոռոզանար, ճուտիկն ի՞նչ կասեր:

Դ.Բիսեթ. «Մոռացված ծննդյան օրը»

Ինչո՞ւ է պատմությունը «Մոռացված ծննդյան օր» կոչվում:

Ձեր կարծիքով՝ ծննդյան օրերն ինչո՞ւ են կորչում: Եթե Յալմարը գնար հայրիկի կորցրածը փնտրելու, բայց նրա ծննդյան օրը բուն գտներ, ի՞նչ կլիներ:

Դուք ինչպե՞ս կվերնագրեիք հեքիաթը: Ինչո՞ւ:

Ի՞նչ գույնի է ամենալավ ծննդյան օրը:

Ինչպիսի՞ն են լինում կորցրած ծննդյան օրերը:

Ա.Խնկոյան. «Ցպուռն ու մրջյունը»

Ուրիշ ինչպե՞ս կվերնագրեիք առակը:

Ցպուռը մրջյունի ի՞նչն էր, իսկ մրջյունը ցպուռի ի՞նչն էր:

Քեզ ծանոթ հեքիաթներից ո՞ր հերոսներն են ցպուռին նման:

Մրջյունը ճի՞շտ վարվեց ցպուռի հետ:

Մրջյունի փոխարեն դուք ինչպե՞ս կվարվեիք:

Նկարագրե՛ք ցպուռին ամռանը և ձմռանը:

Նկարագրե՛ք ցպուռի բույնը:

Պատմությունն այնպես փոխե՛ք, որ մրջյունի բույնը խղճա ցպուռին, դուռը չփակի, և ցպուռը ներս գա. հետո ի՞նչ կլինի:

Ընդունեք՝ ամառն է մեղավոր, որ ցպուռը չի աշխատել: Ինչպե՞ս է պատահել դա:

Հ.Թումանյան. «Ծաղիկներ»

Ինչո՞ւ են ծաղիկները ձմռանը քնում:

Ո՞վ է կարում ձյուն-ծածկոցը:

Ի՞նչ երազ են տեսնում ծաղիկները ձյուն-ծածկոցի տակ:

Ինչպիսի՞ն է ձմռան արևը:

Ջ.Ռոդարի. «Ոչ մի բանից մարդուկը»

Որտեղի՞ց է հայտնվել ոչ մի բանից մարդուկը:

Ինչպիսի՞ն են ոչ մի բանից

մարդը	արևը
մուկը	լուսինը
պանիրը	երգը
պատը	փոշեկուլը

Իսկ ոչ մի բանից լացն ու ծիծաղը ինչպիսի՞ն են:

Աշխարհում ամենամեծ ոչ մի բանը ի՞նչը կարող է լինել:

Պատկերացրե՛ք, որ Կառլսոնը հայտնվել է « Ոչ մի բանից մոլորակը» հեքիաթում, բարեկամացել մարդուկի հետ: Պատմե՛ք այդ հեքիաթը:

Պատմություն հորինե՛ք.

Ոչ մի բանից լացն ու ոչ մի բանից ծիծաղը:

Այս ամենից հետո շատ հեշտ է դասարանական կամ տիկնիկային ներկայացումներ կազմակերպելը: «Մատենիկներում» ընգրկված ստեղծագործությունների մեծ մասն այդ հնարավորությունը տալիս է, մանավանդ որ, դա նյութն անգիր սովորելու համար լավագույն միջոց է:

Ընթերցարանի նյութերի ժամաբաշխում

Առաջարկվող ժամաբաշխումը նպատակ ունի օգնելու ուսուցչին ճիշտ բաշխելու մայրենիի ժամերը: Սակայն դասի և դասարանի տերն ուսուցիչն է և անհրաժեշտության դեպքում իրավասու է փոփոխելու նյութին հատկացված ժամաքանակը: Կարևորը նյութի բազմակողմանի յուրացումն է: Մենք առաջարկում ենք ժամերն հետևյալ կերպ բաշխել.

Մայրենիի ընթերցարան՝ շաբաթական 6 ժամ

Ընդամենը՝ 210 ժամ

Որպես սկիզբ 3 ժամ՝ տպավորությունների փոխանակում, զրույցներ ամռանը կարդացած գրքերի, ամռանն արածի և չարածի, անելիքների շուրջ:

Դասարանական լրագրերի, ամսագրերի, ձեռագիր գրքերի, բացիկների պատրաստում-կազմում, դրանց քննարկում,

ամիսը 2 ժամ.	- 18 ժամ
Արտադասարանական ընթերցանություն	- 12 ժամ

Մնացած 177 ժամը կարելի է բաշխել հետևյալ կերպ

1. Արևի ճառագայթները	- 3 ժամ
2. Արևի հրամանը	- 3 ժամ
3. Ամպի երեխաները	- 3 ժամ
4. Ուսումնարանը	- 3 ժամ
5. Ջուրը փախավ	- 2 ժամ
6. Ճուտիկը	- 3 ժամ
7. Աշուն- 4 ժամ	
8. Բարակ թել	- 2 ժամ
9. Կարապը	- 3 ժամ
10. Տերևաթափ	- 4 ժամ
11. Փոքրիկ տերևի ճամփորդությունը	- 3 ժամ
12. Գետակը	- 4 ժամ
13. Անճոռնի ճուտիկը	- 3 ժամ
14. Մանուկն ու ջուրը	- 4 ժամ
15. Հնարագետ նապաստակը	- 3 ժամ
16. Իրիկուն	- 4 ժամ
17. Աղվեսն ու սագերը	- 3 ժամ
18. Ճանճը	- 3 ժամ

19. Շունն ու կատուն	- 4 ժամ
20. Ճպուռն ու մրջյունը	- 4 ժամ
21. Սուտլիկ որսկանը	- 4 ժամ
22. Կացին ախպեր	- 4 ժամ
23. Ծաղիկները	- 4 ժամ
24. Ամպն ու սարը	- 2 ժամ
25. Մթից վախեցող փոքրիկ ավտոբուսը	- 3 ժամ
26. Պահմտոցի	- 3 ժամ
27. Աշնան վերջը	- 4 ժամ
28. Ձմեռ	- 3 ժամ
29. Գրքից փախած մկնիկը	- 3 ժամ
30. Մոռացված ծննդյան օրը	- 3 ժամ
31. Արջը	- 3 ժամ
32. Փափուկ ձյուն	- 4 ժամ
33. Չափարծիտ	- 3 ժամ
34. Ոսկու կարասը	- 4 ժամ
35. Կիկոսի մահը	- 4 ժամ
36. Չարի վերջը	- 4 ժամ
37. Պույ-պույ մուկիկը	- 3 ժամ
38. Մարտ	- 3 ժամ
39. Տաղ ձնծաղիկին	- 3 ժամ
40. Գնդիկ բոքոնիկ	- 3 ժամ
41. Էմիլի արկածները	- 3 ժամ
42. Էմիլի արկածները	- 3 ժամ
43. Արագիլ	- 4 ժամ
44. Վինի-թուխ	- 3 ժամ
45. Վինի-թուխ	- 3 ժամ
46. Վինի-թուխ	- 3 ժամ (1 ժամ ամփոփում)
47. Մանչուկն ու Կառլսոնը	- 3 ժամ
48. Մանչուկն ու Կառլսոնը	- 3 ժամ
49. Առուն	- 4 ժամ
50. Ոչ մի բանից մարդուկը	- 3 ժամ
51. Մուկիկի մահը	- 4 ժամ
52. Էմիլի արկածները	- 3 ժամ
53. Էմիլի արկածները	- 3 ժամ
54. Առաջին օրը նոր դպրոցում	- 3 ժամ
55. Կրկին դպրոցում	- 3 ժամ

Գիտելիքների ստուգում

Ուսումնական նյութի յուրացումը անհրաժեշտ է ստուգել 4 անգամ (մեկ ուսումնական տարվա ընթացքում): Յուրաքանչյուր ստուգման ժամկետը և տոմսերը հաստատում է դպրոցի տնօրենը:

Յուրաքանչյուր աշակերտի պետք է տրվի 1 տարբերակ (տոմս), որը կազմված լինի 4 առաջադրանքից.

1. բառապաշարի ստուգում (1 առաջադրանք)
2. ընթերցված նյութի յուրացման ստուգում (1 առաջադրանք)
3. ստեղծագործական աշխատանք (1 թեմա)
4. ընդհանուր առաջադրանք «Որ կենդանուն եմ նման. ինչո՞ւ» (1-ին ստուգում) և «Ես տխրում եմ, երբ...» (2-րդ ստուգում):

Ճիշտ կլինի՝ II դասարանում երեխաները հարցերի պատասխանները իրենց հարցաթերթիկի վրա գրեն, քանի որ նրանք գրքից առանձնացված տետրում աշխատելու սովոր չեն:

Կարևորը հարցաթերթիկի ճիշտ կառուցումն է: Տրված նմուշներում դա հաշվի է առնված:

Տարբերակ 1

1. Ի՞նչ է մեզը. ճիշտ պատասխաններն ընդգծի՛ր:
մառախուղ մշուշ
անձրև երկինք
քամի ցուրտ
2. Հիշո՞ւմ ես «Աշուն» բանաստեղծությունը: Գրի՛ր բաց թողնված բառերը:
- դաշտերին
- իջել է աշուն
Անտառը -
Ներկել է -
Պաղ-պաղ - հետ
փչում է -
Քշում է, տանում -
Տերև -
3. Հորինի՛ր շարունակությունը.
Մութը հոգնել էր, ման էր եկել ամբողջ գիշեր, բայց չէր ուզում հեռանալ: Պատի տակ փոքրիկ ծաղիկ էր տեսել: «Եթե գնամ, ծաղիկը մենակ կմնա»,_ մտածում էր նա:
4. Ո՞ր կենդանուն եմ նման. ինչո՞ւ:

Տարբերակ 2

1. *Ուտել, սարսափել, խնդրել, երգել* բառերը գրի՛ր ճիշտ տեղերում.
երգ ասել -
լեղաճաք լինել -
աղաչանք պաղատանք անել -
անուշ անել -
2. Թվի՛ր ամպի որդիներին («Ամպի որդիները»)
3. Հորինի՛ր
Տիկին գդալն ու չարաճճի պատառաքաղը
4. Ո՞ր կենդանուն եմ նման. ինչո՞ւ:

Տարբերակ 3

1. Շարունակի՛ր լրացնել
խայտաբղետ մատիտներ կայտառ գետակ
——— կայտառ -
հնարագետ - - կանաչուտ
2. Ո՞ր ստեղծագործության հերոսներն են.
հայր, մայր, մեծ աղջիկ, միջնեկ աղջիկ, փոքր աղջիկ,
3. Հորինի՛ր
Ճամփորդ քամու արկածները:
4. Ո՞ր կենդանուն եմ նման. ինչո՞ւ:

Տարբերակ 4

1. Տրված բառերը գրի՛ր ճիշտ տեղերում.
անպատճառ, շեն, ողջ, գետնահարկ, թռչկոտել, լուռ
ոստոստալ - ամբողջ -
նկուղ - գյուղ -
անպայման - սուսուփուս -
2. Ո՞ր ստեղծագործությունից են այս բառերն ու արտահայտությունները.
գարնանային առավոտ, աստղեր, ծաղիկներ, թռչնակներ, արև, մութ ամպիկ
3. Հորինի՛ր
Միամիտ դդումն ու ճամփորդ ծիտը
4. Ո՞ր կենդանուն եմ նման. ինչո՞ւ:

Ուսուցիչը կարող է աշակերտների թվով տարբերակներ կազմել կամ բավարարվել վեց-յոթով:

Գնահատման մասին

1-ին առաջադրանք - 1 միավոր (եթե կան սխալներ, ուսուցիչը կարող է տասնորդական կոտորակներից օգտվել):
2-րդ առաջադրանք - 1 միավոր
3-րդ առաջադրանք - 2 միավոր
4-րդ առաջադրանք - 1 միավոր
Ընդամենը՝ 5 միավոր:

Ստորև բերվում են մի քանի առաջադրանքներ, որոնց օգնությամբ կարելի է կազմել տոմսերը (յուրաքանչյուր առաջադրանքից վերցնելով մեկական նմուշ):

I առաջադրանք

Բառապաշարի ստուգում
1. Ճիշտ պատասխաններն ընդգծի՛ր.
Ի՞նչ է նշանակում **պաղ** բառը
սառը ջերմ
ցուրտ նոր
2. Ստուգվող բառերով բառակապակցությունների կազմում.
Շարունակի՛ր լրացնել.
ա) խայտաբղետ ծաղիկները
խայտաբղետ -
կայտառ -
թուխ -
դալար -
բ) հնարագետ մարդ
հնարագետ -
փորձված -
- օթյակ
սոսկալի -
գ) **Դիզել, գյուղապետ, անձայն, միշտ** բառերը գրի՛ր ճիշտ տեղերում.
մշտապես -
կիտել -
տանուտեր -
սուսուփուս -
դ) **անպատճառ, շեն, ողջ, գետնահարկ** բառերը գրի՛ր ճիշտ տեղերում.
նկուղ - ամբողջ -
անպայման - շեն -

ե) **Ծնկահար, վտարված, չորքոտանի, թռչկոտել** բառերը գրի՛ր ճիշտ տեղերում
դուրս արված -
ծնկներին հասնող -
ոստոստալ -
չորս ոտք ունեցող -
զ) **Մարգագետին, հեզ, քերծ, անհնազանդ** բառերը գրի՛ր ճիշտ տեղերում
չենթարկվող -
խելոք -
լեռան կատար -
կանաչով և ծաղիկներով պատված դաշտ -
է) **Անուշահոտ, ցրտաշունչ, անշտապ, թուխպ** բառերը գրի՛ր ճիշտ տեղերում:
շատ ցուրտ -
առանց շտապելու -
բուրավետ -
ամպ -
ը) **Նահանջել, խոխոջալ, սրտնեղել, գոռալ** բառերը գրի՛ր ճիշտ տեղերում:
տրտնջալ -
ետ քաշվել -
գոչել -
կարկաչել -
3. Ճիշտ տեղադրի՛ր տրված բառերը:
Այս առաջադրանքը նման է նախորդին, բայց այս դեպքում ստուգվում է դարձվածքների իմացությունը:
Այսպես՝ ճիշտ տեղադրի՛ր տրված բառերը.
ա. **երգել, լռել, ապշել, սարսափել**
ձայն ծպտուն չհանել -
երգ ասել - լեղաճաք լինել -
աչքերը չորս բացել -
բ. **փրկվել, ուտել, խնդրել, շնչել**
անուշ անել -
գլուխն ազատել -
աղաչանք պաղատանք անել -
շունչ առնել -
գ. **հպարտ, չստացվեց, վառվել, նահանջել**
բոցը չորս կողմը բռնել -
քիթը տնկած -
ետ քաշվել -
բան դուրս չեկավ -
դ. էշի ականջում քնած - ձայնը գլուխը գցել -
նշան անել - խելքի գալ -

Առաջադրանքների հաջորդ **II խումբը** վերաբերում է գեղարվեստական ստեղծագործություններին. պետք է ստուգել երեխաները հիշո՞ւմ են կարդացած գործերը:

1. Գրի՛ր հաջորդ տողը.
ա) Շուրջս դատարկ
բ) Էսօր ուրախ օր կանի
2. Գրի՛ր պակասող բառերը.
ա) - դաշտերին
- աշուն
Անտառը -
Ներկել է -
բ) Սարի -
- միջում, Խոխոջում է
Ու -
Ջուրը բարակ

Վերևում տրված երկու առաջադրանքներն ավելի շատ հարմար են չափածո ստեղծագործությունների յուրացումն ստուգելիս:

Արձակ ստեղծագործությունների յուրացման ստուգման համար առաջարկվում են հետևյալ առաջադրանքները:

1. Ո՞ր ստեղծագործության հերոսներն են.
ա) հայր, մայր, մեծ աղջիկ, միջնեկ աղջիկ, փոքր աղջիկ.
բ) ագռավ, աղվես, կկու
գ) լորիկ, ծիտ, ծառ, քարեր, ջրեր:
Թվի՛ր մյուս հերոսներին:
դ) աղվես, նապաստակ, ագռավ, ծերուկ.
Թվի՛ր մյուս հերոսներին:
2. Թվի՛ր պատմության հերոսներին:
ա) Թվի՛ր «Մանչուկն ու Կառլսոնը» պատմության հերոսներին:
բ) Թվի՛ր «Արևի ճառագայթները» պատմության հերոսներին:
գ) Թվի՛ր «Կացին ախպերը» հեքիաթի հերոսներին:
3. Ո՞ր ստեղծագործություններից են այս բառերն ու արտահայտությունները (պիտի գրել հատկապես ա՛յդ ստեղծագործությանը հատուկ բառեր):
ա) գարնանային առավոտ, աստղեր, ծաղիկներ, թռչնակներ, արև, մութ ամպիկ
բ) խփել տանիքներին, հորդանալ, ծովացնել, ծարավ կանաչներ, ճերմակ աղջիկ, փափուկ վերմակ, խենթ, քնքուշ, աղջիկ, գարնան գիշեր, ցուրտ
գ) աշխատասեր, աշակերտ, գիրք, ջուր անել, պարոն, ծիծաղել, հնազանդվել, լոջանալ, բարկանալ
դ) վրա հասնել, փրփրել, քլթքլթալ
ե) պառավ նան, թուխ, բրդոտ ճուտիկ

Երկրորդ ստուգման ժամանակ տրվող բառերը ավելի քիչ պիտի լինեն:

Ցանկալի է, որ այդ ցուցակում ստեղծագործության գլխավոր հերոսի անունը չլինի:

4. Երկրորդ ստուգման ժամանակ կարելի է նաև այսպիսի առաջադրանք դնել.

Ո՞վ է այսպես մտածում (կամ ասում), ո՞ր ստեղծագործությունից է:

ա) - Ես էլ եմ քաջ, ես էլ եմ լավը:
Ո՞ր ստեղծագործությունից է՝
բ) - Վա՜յ, այս ի՞նչ եմ արել, հավի տակ բադի ձու եմ դրել:
գ) - Վա՜յ իմ գլխին, հիմա ի՞նչ պիտի անեմ, իմ փոքրիկներին սրանց ձեռքից ինչպե՞ս ազատեմ:
դ) - Վախենալու ոչինչ չկա: Եթե վախենաս, երեկոյան դուրս չգաս աշխարհը ծածկելու, մարդիկ այդպես էլ չեն իմանա, որ քնելու ժամանակն է:
ե) - Հիմարի՜կ, ես քեզ լավ խորհուրդ կտամ, թաքնվի՛ր Երկրի մյուս կողմում:
զ) Ուրեմն ամբողջ կյանքում առանց շա՞ն եմ ապրելու:
5. Հիշո՞ւմ ես « ...» ստեղծագործությունը, ինչո՞ւ էր...
ա) Հիշո՞ւմ ես «Մոռացված ծննդյան օրը».
հայր փիղը ինչո՞ւ էր գլխի վրա կանգնել:
բ) ինչո՞ւ սովորական մկները չէին հասկանում գրքից փախած մկնիկին:
գ) Հիշո՞ւմ ես «Ոչ մի բանից մարդուկը». ինչպիսի՞ն էին պանրի անցքերը:
դ) Վինի թուխը ինչո՞ւ էր Քրիստոֆեր Ռոբինից փուչիկ ուզում:
ե) Ինչպիսի՞ ճիպոտ էր փնտրում Չափարծիտը: Ինչո՞ւ էր փնտրում այդ ճիպոտը:

III խմբի առաջադրանքներով ստուգվում են երեխաների ստեղծագործական ունակությունները:

Առաջարկվում են ստեղծագործական շարադրությունների մի քանի վերնագիր. ուսուցիչը կարող է ավելացնել այդ ցանկը:

1. Ծովի կորած ալիքի արկածները
2. Պահարանում ապրող կախարդ թութակը
3. Տիկին գդալն ու չարաճճի պատառաքաղը
4. Միամիտ դդումն ու ճամփորդ ծիտը
5. Ո՞վ է վառում երկնքի աստղերը
6. Աստղերն ու միայնակ ծառը
7. Շարունակի՛ր ...

Մեր քաղաքի քաղաքագլուխը մի զարմանալի պահարան ուներ: Այն շրջում էր խանութները և բաժանում տիրոջ շորերը: Քաղաքագլուխը կրակն էր ընկել. ի՞նչ աներ: Նա երկար-բարակ մտածեց:

8. Շարունակի՛ր ...

Ծաղիկը մուշ-մուշ քնել էր: Հանկարծ մեկը խուտուտ տվեց: «Օ՜ֆ, տեսնես ո՞վ է ինձ խանգարում»,- մտածեց նա ու շուռ եկավ մյուս կողքին: Այս մեկը էլի խուտուտ տվեց:

9. Շարունակի՛ր ...

Լուսինը նոր էր ծնվել: Գեղեցիկ, փայլուն, ուրախ նորալուսին էր: Գեղեցիկ, փայլուն ուրախ նորալուսինը ներքև նայեց, լիճ տեսավ, լճի մեջ՝ գեղեցիկ, փայլուն, ուրախ նորալուսին: Տխրեց լուսինը երկնքում:

IV առաջադրանքը մեկն է, որ պիտի տրվի բոլորին:

I ստուգման ժամանակ՝

Ո՞ր կենդանուն եմ ես նման. ինչո՞ւ: I ստուգում

Տխրում եմ, երբ... II ստուգում

III և IV ստուգումների ժամանակ՝ առաջադրանքները քիչ ավելի բարդ պիտի լինեն:

Բառային աշխատանքի նմուշներ

1. Հոմանիշներից ընտրել անհրաժեշտ բառը.

ա) փակագծերում գրված բառերից ու արտահայտություններից մեկը գրի՛ր ճիշտ տեղում

Ծակից ներս չի մտնում

Սովից էլ -

(ուշաթափվում է, ուշքն է գնում)

բ) Սիրտն ուրիշ բան չի ուզում

Նայում է ու -

(բարակում, նիհարում, նվազում)

գ) Մին էլ որ գա ու -

Մի՛ վախենա, քշի՛ գնա.

(վախեցնի, սպառնա, ահ տա, սարսափեցնի)

- ծառի տակին նստում է, սկսում սուգ անել

(իսկույն, տեղնուտեղը, առանց ժամանակ կորցնելու, հենց տեղում)

Արտագրի՛ր ընդգծված բառերի փոխարեն (կամ կողքին)

Գրի՛ր դրանց իմաստով մոտ այլ բառեր՝

ընտրի՛ր փակագծերում գրված բառերից

ա) *(զարմանալի, նվեր, բարձր, արդար, մեծ)*

Կարասով ոսկին աղքատ հողագործներին ընծա է ուղարկված՝ իրենց ազնիվ աշխատանքի համար:

բ) *(հանգիստ, մեղմ, հանդարտ, թույլ)*

Խաղաղ, կամաց իջի՛ր այնպես

Ծաղիկները չարթնանան:

գ) *(կարգվեր, դրվեր, ընտրվեր, տարվեր)*

Թռչուններին թագավոր պիտի նշանակվեր:

դ) *(վախենալու, սոսկալի, ահռելի, ահավոր)*

Խիստ սարսափելի

Ցուրտ է գալիս:

II խմբի առաջադրանքները կատարելիս երեխաներն արդեն պիտի կարողանան հատվածներ պատմել տրված ստեղծագործություններից, աշխատանքի ծավալը փոքր-ինչ պիտի մեծացվի: 1-ին հարցը վերաբերում է հերոսների արարքներին, ստեղծագործության գործողություններին:

ա) Շարունակի՛ր

Արևը հոգնել էր, ման էր եկել ամբողջ օրը:

Թռչնակը երգում էր, որ -

Նապաստակը -

Որսկանը -

Լուսինը -

բ) Ճպուռը ողջ ամառը երգեց, պարեց, ճռճռաց:

Չմեռը -

Ճպուռը -

Մրջյունը -

գ) Վինի թուխը գնաց զբոսնելու:

Վինի թուխը մի ծառի կատարին մեղուներ տեսավ:

Վինի թուխը սկսեց -

Համարյա բան չէր մնացել, որ Վինի թուխը հասներ մեղուներին ու -

Վինի թուխը որոշեց -

Շարունակի՛ր պատմել.

ա) Ինչպե՞ս հայտնվեց Կառլսոնը.

Փոքրիկը տխուր նստած էր սենյակում: Հանկարծ

բ) Շունը մորթի տվեց կատվին, որ իր համար գլխարկ կարի: Կատուն սիրով համաձայնեց և ասաց, որ ուրբաթ օրը գլխարկը պատրաստ կլինի: Ուրբաթ օրը շունը եկավ:

գ) Թագավորը կանչում է իր իմաստուններին և հրամայում բացատրել ոսկու կարասի հրաշքը:

դ) Ագռավը կարծեց, թե աղվեսն իրավ սատկել է, թռավ եկավ, որ աչքերը հանի: Աղվեսը

ե) Ես չեմ համբերում, մեջքս պատին դեմ եմ անում և քացով խփում եմ նրա փորին: Շեկ, գեր տղան «ահ» է անում ու ընկնում:

III առաջադրանքները ևս քիչ ավելի բարդ են:

1. Ծաղկավոր մութն ու տխուր առավոտը
2. Պահարանների թագավորն ու աղքատ զգեստը
3. Ծիծաղելի պատմություն ոչ ոքի մասին
4. Անտառում
5. Խառնաշփոթ պատմություն
6. Ով ինչ ցանի, այն կհնձի:

Շարունակի՛ր հորինել.

ա) Ապրում էր մի Ոչ ոք: Խեղճ Ոչ ոքի բախտը չէր բերում: Ոչ մեկը Ոչ ոքին չէր ուզում նեղացնել, բայց

բ) Մատիտներն ապրում էին գեղեցիկ տուփի մեջ: Ապրում էին հաշտ ու խաղաղ: Մի օր չգիտես սև մատիտի խելքին ինչ փչեց, սկսեց ծաղրել բոլորին, սևացնել տուփը: Մատիտները

գ) Արևի փոքրիկ շողը նստեց ծաղկի թերթիկին ու նայեց շուրջը: Դաշտում շատ լավ էր: «Չեմ գնա այստեղից»,- մտածեց շողը:

դ) Ագռավը նստել էր ծառի ճյուղին ու փնթփնթում էր անցնող-դարձողների վրա:

ե) Ծաղիկների գնացքը հեռվից էր գալիս, շատ էր հոգնել: Որոշեց մի քիչ կանգնել հանգստանալ: Գտավ մի սիրուն մարգարիտ, կանգնեց, նայեց շուրջը:

զ) Հունվար ամիսն էր, ապրիլի մեկը: Արևից ծյուն էր թափվում ու շատ շոգ էր: Փողոցները ցրտից կծկվել էին, ջրերը շոգից աջ ու ձախ էին վազվզում:

Վերջին առաջադրանքը բոլորի համար մեկն է.

- Ես ուրախանում եմ, երբ ...

Տարբերակները կազմվում են նախկին սկզբունքով, առաջադրանքների (I, II, III, IV) յուրաքանչյուր տեսակից վերցվում է մեկը:

II դասարանն ավարտած աշակերտը պիտի կարողանա

1) բանավոր և գրավոր հստակ, հասկանալի արտահայտել մտքերը

2) կարդալ (մտքում և բարձրաձայն) և հասկանալ կարդացածը

3) գրավոր և բանավոր պատմել կարդացածը

4) հասկանալ և գործածել այն բառերը, որոնց իմաստը բացատրված է դասագրքում

5) տրված թեմաներով ստեղծագործական և նկարագրական շարադրություններ գրել:

Կրտսեր դպրոցի ընթերցարաններով ընթերցել սովորեցնելը չի հանգեցնում սոսկ կարդալու տեխնիկայի ձեռքբերմանը:

Կարդալու իսկական ունակությունը, գրագիտությունը ստեղծագործությունը հասկանալու և գնահատելու ունակությունն է, կարդալու ընթացքում ձևավորվող ճաշակը:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

Երկրորդ դասարանում մաթեմատիկայի ծրագրային նյութն ընդգրկում է տաս հազարի սահմանում համրանքը և թվագրությունը, տրված թվի նախորդ և հաջորդ թվերը, թվերի ներկայացումը կարգային գումարելիների գումարի տեսքով, թվերի համեմատումը, տաս հազարի սահմանում թվերի գումարումհանումը, բազմապատկման և բաժանման գործողությունները, միանիշ թվերի բազմապատկման աղյուսակը և բաժանման գործողության համապատասխան դեպքերը, երկնիշ թվերի բազմապատկումը միանիշ և երկնիշ թվերով և բաժանման համապատասխան դեպքերը, բազմապատկման գործողության հատկությունները թվային արտահայտության և դրա արժեքը, գործողությունների կատարման հերթականությունը թվային արտահայտություններում, ... անգամ մեծ, ... անգամ փոքր հասկացությունները, թվային սանդղակ, երկրաչափական պատկերներ:

Երկրորդ դասարանում ավելանում է գրավոր աշխատանքի ծավալը: Նոր տիպի առաջադրանքի կատարումից առաջ պետք է բանավոր նախապատրաստական աշխատանք տարվի: Կարևորվում են բանավոր հաշվումները:

Ուսուցման պրոցեսը կազմակերպելիս պետք է առավելություն տալ այն թվերին, որոնց դեպքում ավելի մեծ չափով ի վիճակի են զարգանալու աշակերտի հոգեկան կարողությունները՝ կամքը, մտածողությունը, երևակայությունը, ուշադրությունը, հիշողությունը, դիտողականությունը, հնարամտությունը: Կարելի է ասել, որ գերադասելի է ինքնուրույն ձեռքբերումների, իմացական ինքնուրույն աշխատանքի մեթոդը:

Կրտսեր դպրոցում ուսուցման ընթացքի կազմակերպման նման ձևի համար շատ հարմար են գիրք-տետրերը: Դրանք նախատեսված են հենց աշակերտի համար: Ուսուցչի խնդիրն է, ծրագրային խնդիրներին քաջատեղյակ լինելով, նախապատրաստել աշակերտին նոր տիպի առաջադրանքի կատարմանը և պատրաստ լինել օգնելու դժվարացողներին:

Առաջադրանքներն այնպես են մշակված, որ երեխան ինքնուրույն կարդա, հասկանա և կատարի հանձնարարությունը: Դրանք ըստ կատարման նպատակի կարելի է բաժանել երեք խմբի.

ա) առաջադրանքներ, որոնք ամրապնդում են բանավոր մատուցված նյութը

բ) առաջադրանքներ, որոնք օգնում են իմացումի հրճվանք ապրել, ինքնուրույն գիտելիք ձեռք բերել

գ) առաջադրանքներ, որոնք ստուգում են նյութի յուրացումը:

Ուսուցչի համար դժվար չի լինի որոշել, թե տվյալ դասի ո՞ր պահին կամ ո՞ր հատվածում պետք է գիրք-տետրով աշխատել :

Երկրորդ դասարանն ավարտող աշակերտը պետք է իմանա.

- 0-ից տաս հազար թվերի անվանումները
- 0-ից տաս հազար թվերի գրառումը
- մինչև տաս հազար թվերի հաջորդականությունը
- թվերի կարգային կազմությունը
- միանիշ թվերի գումարման աղյուսակը
- միանիշ թվերի բազմապատկման աղյուսակը
- թվաբանական գործողությունների նշանները
- թվային արտահայտություններում գործողությունների կատարման հերթականությունը:

Երկրորդ դասարանն ավարտող աշակերտը պետք է կարողանա.

- հաշվել տաս հազարի սահմանում
- հաշվել տասնյակներով
- որոշել տրված թվի անմիջապես նախորդ և անմիջապես հաջորդ թվերը
- որոշել, թե տրված թիվը ո՞ր թվին է նախորդում
- որոշել, թե տրված թիվը ո՞ր թվին է հաջորդում
- համեմատել տրված երկու թվերը (տաս հազարի սահմանում)
- տրված թվերը դասավորել աճման կարգով
- տրված թվերը դասավորել նվազման կարգով
- գրել և կարդալ թվերը (տաս հազարի սահմանում)
- թիվը ներկայացնել կարգային գումարելիների գումարի տեսքով
- տաս հազարի սահմանում կատարել գումարման և հանման գործողությունները
- բազմապատկել միանիշ թվերը
- երկնիշ թիվը բազմապատկել միանիշ թվով
- միանիշ կամ երկնիշ թիվը բաժանել միանիշ թվի վրա
- հաշվել երկու-երեք գործողություն պարունակող արտահայտության արժեքը
- օգտվել թվային սանդղակից ու թվային հարթությունից
- գծել եռանկյուն, քառանկյուն
- - օգտվել ժամացույցից
- տրված միավորով չափել որոշակի հեռավորություն
- լուծել ...ով մեծ, ...ով փոքր, ...անգամ մեծ, ...անգամ փոքր առնչություններով թվաբանական խնդիրներ:

Ուսուցանվող նյութի յուրացումը ստուգելու նպատակով ուսումնական տարվա ընթացքում 4 անգամ անց են կացվում ստուգումներ (երկու ստուգում յուրաքանչյուր կիսամյակում) և տարեվերջյան մի ստուգում: Ստուգումները

պետք է օգնեն ուսուցչին և յուրաքանչյուր աշակերտի՝ ընդգծելու նրա հաջողություններն ու թերացումները:

Մաթեմատիկայի դասերին ցանկալի է, որ աշակերտն ունենա գունավոր մատիտներ, գրիչ, մկրատ, գունավոր թղթեր, քանոն, համրիչ:

Երկրորդ դասարանցիներին առաջարկվում է երկու գիրք-տետր (մի գիրք-տետր յուրաքանչյուր կիսամյակում): Առաջինում հիմնականում քննարկվում են թվաբանական չորս գործողությունները՝ հարյուրի սահմանում: Երկրորդում թվերի սահմանը ընդարձակվում է մինչև հազարը, հետո՝ մինչև տաս հազարը: Դիտարկվում է երկնիշ թվի բազմապատկումը երկնիշ թվով: Երկու գրքերում էլ աշակերտներին առաջարկվում են խնդիրներ:

Ծրագրային նյութը ըստ դասաժամերի կարելի է բաժանել հետևյալ կերպ.

1. Կրկնություն (20 ժամ).
- միանիշ և երկնիշ թվեր
- ուղիղ համրանք, հետ համրանք
- տրված թվի նախորդ և հաջորդ թվերը
- տասնյակներ, միավորներ
- միանիշ թվերի գումարման աղյուսակը
- երկնիշ թվերի գումարումն ու հանումը:

2. Բազմապատկում, բաժանում (60 ժամ).
- նախապատրաստում բազմապատկման գործողությանը
- բազմապատկման գործողությունը
- միանիշ թվերի բազմապատկման աղյուսակը
- թվային արտահայտություններ գումարման, հանման և բազմապատկման գործողություններով
- գործողությունների կատարման հերթականությունը թվային արտահայտություններում
- նախապատրաստում բաժանման գործողությանը
- բաժանման գործողությունը
- բաժանման գործողության աղյուսակային դեպքերը
- թվային արտահայտություններ չորս գործողություններով
- երկնիշ թվի բազմապատկումը միանիշ թվով
- բաժանման համապատասխան դեպքերը:

3. Հազարի սահմանում թվերի անվանումն ու գրառումը (10 ժամ).
- հարյուրավորների կարգ
- համրանք հարյուրյակներով, տասնյակներով, միավորներով
- եռանիշ թվերի անվանումն ու գրառումը
- եռանիշ թվի ներկայացումը կարգային գումարելիների գումարի տեսքով:

4. Հազարի սահմանում թվերի գումարումն ու հանումը (20 ժամ).
- եռանիշ թվին միանիշ թիվ գումարելն ու հանելը՝ առանց կարգային անցումների
- եռանիշ թվին 0-ով վերջացող երկնիշ թվի գումարելն ու հանելը՝ առանց հարյուրավորների կարգում կարգային անցումների
- եռանիշ թվին 0-ով վերջացող երկնիշ թիվ գումարելն ու հանելը կարգային անցումներով
- եռանիշ թվին միանիշ թիվ գումարելն ու հանելը կարգային անցումներով
- հազարի սահմանում թվերի գումարումն ու հանումը:

5. Երկնիշ թվերի բազմապատկումը (15 ժամ).
- բազմապատկման գործողության հատկությունները
- երկնիշ թվերի բազմապատկումը:

6. Տաս հազարի սահմանում թվերի անվանումն ու գրառումը (15 ժամ).
- հազարավորների կարգ
- համրանք հազարյակներով, հարյուրյակներով, տասնյակներով
- քառանիշ թվերի անվանումն ու գրառումը
- քառանիշ թվերի ներկայացումը կարգային գումարելիների գումարի տեսքով:

7. Թվաբանական գործողությունները տաս հազարի սահմանում (20 ժամ).
- քառանիշ թվին հազարյակներ ավելացնելը
- քառանիշ թվին հարյուրյակներ ավելացնելը
- քառանիշ թվին տասնյակներ ավելացնելը
- քառանիշ թվին միանիշ թիվ ավելացնելը
- տաս հազարի սահմանում թվերի գումարելն ու հանելը:

8. Խնդիրներ (10 ժամ).
- ...ով մեծ (շատ, ավել)
- ...ով փոքր (քիչ, պակաս)
- ...անգամ մեծ (շատ, ավել)
- ...անգամ փոքր (քիչ, պակաս)
- ընդամենը:

Առաջարկվող ժամաբաշխումը ուսուցիչը կարող է փոխել՝ հաշվի առնելով դասարանի ռեալ վիճակը:

Ուսուցիչը պետք է ուշադիր ծանոթանա ամբողջ նյութին: Նա պետք է հստակ պատկերացնի բոլոր առաջադրանքների իմաստը և կատարման նրբությունը: Պետք է պատրաստ լինի նույն բնույթի ավելի բարդ կամ ավելի պարզ առաջադրանքներ հանձնարարելու, նախօրոք որոշի, թե բանավոր աշխատանքի ժամանակ ինչի՞ վրա պետք է ուշադրություն դարձնի:

Աշակերտը գիրք-տետրով հիմնականում պետք է աշխատի դասարանում: Տանը պետք է վերջացնի դասարանում չավարտած առաջադրանքները (դրանք կրկնությանը վերաբերող առաջադրանքներ պետք է լինեն), կատարի **հորինի՛ր ինքդ** տիպի առաջադրանքները:

Ըստ բովանդակության առաջադրանքները կարելի է բաժանել մի քանի խմբի.

ա) Համրանք

Այս տիպի առաջադրանքների կատարմանը պետք է նախորդի ամենօրյա բանավոր աշխատանքը: Աշակերտը պետք է կարողանա վարժ հաշվել (ուղիղ և հետ) տարբեր քայլերով: Գրքում բերված առաջադրանքներում տրված են շարքի մի քանի թվերը, որոնցով աշակերտը պետք է որոշի, թե որ ուղղությամբ և ինչ քայլով է հաշվելու: Ինքնաստուգման համար տրված են շարքի ևս մի քանի անդամներ:

բ) Գումարման և հանման գործողությունները (հարյուրի սահմանում)

Այս տիպի առաջադրանքները առաջին գրքի սկզբի էջերում են և նախատեսված են առաջին դասարանում անցածը կրկնելու համար: Որպես առանձին առաջադրանք հանձնարարվում է լրացնել միանիշ թվերի գումարման աղյուսակը: Գումարման և հանման գործողությունները զուգահեռ են դիտարկվում, ինչը հնարավորություն է տալիս մի գործողության միջոցով ստուգելու մյուսի կատարման ճշտությունը: Աշակերտներին հանձնարարվում է նաև լրացնել տասնյակների գումարման աղյուսակը: Այս աղյուսակները լրացնելիս աշակերտի ուշադրությունը պետք է հրավիրել դրանց հատկությունների վրա: Աշակերտները թո՛ղ փորձեն որքան հնարավոր է օրինաչափություններ հայտնագործել այդ աղյուսակներում:

գ) Տրված թվի նախորդ, հաջորդ թվերը.

Փորձը ցույց է տալիս, որ աշակերտները դժվարանում են մեծ թվերի նախորդ և հաջորդ թվերը գտնելիս, իսկ այդ հատկությունները կարևոր են թվերի հաջորդականությունը ընկալելու համար: Նախորդ, հաջորդ թվերը գտնելու առաջադրանքներում թվերը աստիճանաբար մեծանում են:

դ) Թվերի համեմատումը.

Այս տիպի առաջադրանքները սկսվում են երկու թվերի համեմատումից, երբ պետք է որոշել, թե տրված թվերը ի՞նչ հարաբերության մեջ են գտնվում, և դնել համապատասխան նշանը (>, <, =): Առաջարկվում է գտնել թվերի տրված խմբի ամենամեծ կամ ամենափոքր թվերը: Այստեղ կարևոր է աշակերտին հնարավորություն տալ տեսնելու, որ մի խմբի ամենամեծ թիվը կարող է փոքր լինել մյուս խմբի ամենափոքր թվից: Գրքերում կան նաև այնպիսի առաջադրանքներ, երբ պետք է համեմատել թվային արտահայտությունների արժեքները:

ե) Թիվը կարգային գումարելիների գումարի տեսքով ներկայացնելը.

Կան առաջադրանքներ, որոնցում պետք է որոշել, թե տրված թիվը յուրաքանչյուր կարգային գումարելուց քանի հատ է պարունակում, կամ տրված են կարգային գումարելիները, պետք է գտնել առաջադրանքները, որտեղ աշակերտը պետք է համրիչի վրա ցույց տա տրված թիվը, կամ համրիչից կարդա թիվը:

զ) Բազմապատկման գործողության նախապատրաստում.

Այս առաջադրանքները աշակերտին նախապատրաստում են բազմապատկումը որպես հավասար գումարելիների գումար ընկալելուն: Առարկաների քանակը տրված խմբում հաշվելու համար նա առարկաները բաժանում է հավասար քանակով առարկաների խմբերի և գումարելով հաշվում բոլոր առարկաների թիվը:

է) Բազմապատկում.

Այս առաջադրանքներում ներմուծվում է բազմապատկման գործողությունը, որպես մի քանի հավասար գումարելիների գումար: Նախքան բազմապատկման գործողության նշանի ներմուծումը (**x** և •) նպատակահարմար է օգտագործել **անգամ, հատ** բառերը: Առաջադրանքները օգնելու են միանիշ թվերի բազմապատկման աղյուսակը յուրացնելուն: Հասկանալի է, որ բազմապատկման աղյուսակը յուրացնելու համար միայն բերված առաջադրանքներով չի կարելի բավարարվել: Անհրաժեշտ է ամենօրյա բանավոր աշխատանք: Միանիշ թվերի բազմապատկումը յուրացնելուն զուգահեռ, կատարում են տասնյակների բազմապատկում միանիշ թվերով:

Գործնական եղանակով, օրինակների օգնությամբ ծանոթանում են բազմապատկման գործողության հատկություններին: Օգտագործելով բազմապատկման գործողության բաշխական հատկությունը, սովորում են երկնիշ թիվը միանիշ թվով բազմապատկել:

ը) Բաժանման գործողության նախապատրաստում.

Բազմապատկման գործողության յուրացմանը զուգահեռ կան առաջադրանքներ, որոնք նախապատրաստում են բաժանման գործողությանը: Դրանք երկու տեսակ են. **առաջադրանքներ**, որոնցում տրված խմբի առարկաները պետք է հավասար բաժանել տրված քանակով մասերի և գտնել յուրաքանչյուր մասում առարկաների քանակը, և **առաջադրանքներ**, որոնցում տրված խմբի առարկաները պետք է բաժանել հավասար թվով առարկաներ պարունակող խմբերի ու գտնել խմբերի քանակը:

թ) Բաժանման գործողություն.

Այս խմբին վերաբերվում են այն առաջադրանքները, որոնցում պետք է բաժանման գործողություն կատարել: Բաժանման գործողությունը դիտվում է որպես բազմապատկմանը հակադարձ գործողություն: Քանորդը գտնելու

համար փնտրվում է այն թիվը, որը բաժանարարով բազմապատկելիս կստանանք բաժանելին: Կատարվում են բաժանման աղյուսակային դեպքերը: Գործնական եղանակով ծանոթանալով երկու թվերի գումարը երրորդ թվին բաժանելու հատկությանը, սովորում ենք երկնիշ, եռանիշ, քառանիշ թվերը միանիշ թվի վրա բաժանելը (բաժանելին ներկայացնելով բաժանարարի վրա բաժանվող գումարելիների գումարի տեսքով):

ժ) Բազմապատկման և բաժանման գործողությունների կիրառումը.

Սրանք առաջադրանքներ են, որոնցում առարկաների քանակը հաշվելու համար պետք է կիրառել բազմապատկման և բաժանման գործողությունները:

ժա) Գործողություններում պակասող թվերը լրացրո՛ւ.

Այս առաջադրանքները հարմար են ստուգելու, թե տրված գործողությունը ինչպես է յուրացրել աշակերտը: Կան այնպիսի առաջադրանքներ, որոնցում գործողության կատարելը պարտադիր չէ, բավական է հիշել գործողությունների փոխադարձ կապը, դրանց հատկությունները: Կան առաջադրանքներ, որոնցում պետք է լրացնել և՛ գործողության նշանը, և՛ գործողության պակասող անդամը: Հաճախ նման առաջադրանքները ունեն ոչ միարժեք լուծում:

ժբ) Գրքերում մեծ տեղ է հատկացված թվային արտահայտություններին և դրանց արժեքները հաշվելուն: Գործողությունների կատարման հերթականությունը յուրացնելու նպատակով հաճախ կիրառվում են սխեմաներ:

ժգ) Թվային սանդղակներ և թվային հարթություն

ժդ) Մոգական քառակուսիների լրացում

ժե) Միացությունների տարրեր:

Այս առաջադրանքներում աշակերտը նույն տարրերից տարբեր միացություններ է ստանում (տրված թվանշաններով տարբեր թվեր գրի՛ր, գնդերը տարբեր գծերով դասավորի՛ր, կետերը միացնելով եռանկյուններ ստացի՛ր):

ժզ) Երկրաչափական պատկերներ:

Կարևորվում է տարբեր երկրաչափական պատկերների կառուցումը: Կան առաջադրանքներ, որոնց միջոցով աշակերտին պետք է ցույց տալ, որ միշտ չենք կարող եռանկյուն կառուցել, որի գագաթները լինեն տրված երեք կետերը:

ժէ) Վարժություններ (արտահայտություններ) գրի՛ր և կատարի՛ր.

Այս առաջադրանքները հարմար են տանը հանձնարարելու համար: Դրանք կարելի է դասարանում առաջարկել այն աշակերտին, ով դասի համար նախատեսված առաջադրանքներն արդեն կատարած կլինի: Այս առաջադրանքների բաժնում ծնողն էլ կարող է երեխայի համար վարժություններ գրել:

ժը) Խնդիրներ.

Այժմ ներկայացնենք ընթացիկ և տարեվերջյան ստուգումների համար տարբերակների նմուշներ: Ստուգումների ժամանակ ուսուցիչն ինքը կկազմի առաջադրանքների տարբերակներ: Առաջադրանքները կգնահատվեն 20 միավորանոց համակարգով:

I ստուգում
(մոտավորապես հոկտեմբերի վերջին)

1. Շարքում պակասող թվերը լրացրու: (2 միավոր)
19, 22, 25, ..., ..., ..., ...; ..., ..., 46
2. Ամեն մի թվի տակ նրա հաջորդ թիվը գրի՛ր: (2 միավոր)
34, 61, 0, 99, 48
3. Շարքի ամենափոքր թիվը գտի՛ր: (2 միավոր)
29, 80, 9, 16, 79, 69
4. Գործողությունները կատարի՛ր: (8 միավոր)
ա) 30 + 70 = բ) 29 + 40 = գ) 74 + 8 =
դ) 62 + 15 = ե) 49 + 16 = զ) 58 + 46 =
է) 80 - 50 = ը) 92 - 40 = թ) 63 - 5 =
ժ) 78 - 25 = ժա) 33 - 18 = ժբ) 51 - 18 =
5. Լրացրո՛ւ բաց թողնված թվերը: (3 միավոր)
ա) 36 = տասնյակ և միավոր
բ) 7 տասնյակ և 8 միավոր =
6. Կետերը չորսական խմբավորի՛ր և հաշվի՛ր: (3 միավոր)

II ստուգում
(առաջին կիսամյակի վերջում)

1. Հաշվի՛ր: (8 միավոր)
ա) 28 + 59 = բ) 63 + 28 = գ) 38 + 45 =
դ) 64 - 15 = ե) 41 - 23 = զ) 73 - 18 =
2. Հաշվի՛ր օգտագործելով բազմապատկում: (3 միավոր)
ա) 8 + 8 + 8 + 8 = բ) 6 + 6 + 6 + 6 + 6 =
3. Գրի՛ր գումարի միջոցով: (3 միավոր)
ա) 4 x 7 = բ) 9 x 7 = գ) 3 x 6 =
4. Հաշվի՛ր: (3 միավոր)
5 . 2 = 7 . 6 = 4 . 8 = 2 . 9 =
5. Արմենը 8 տարեկան է: Հայրը նրանից մեծ է 29 տարով: Քանի՞ տարեկան է հայրը: (3 միավոր)

III ստուգում
(ապրիլի սկզբներին)

1. Շարքում պակասող թվերը լրացրո՛ւ: (3 միավոր)
160, 170, 180, ..., ..., ..., ..., ..., ..., 250
2. Ամեն մի թվի վերևում գրի՛ր նրա նախորդ թիվը: (3 միավոր)
368, 400, 900, 670, 1000
3. 728-ից մեծ, բայց 760-ից փոքր վեց հատ թիվ գրի՛ր: (3 միավոր)
4. Պակասող թվերը լրացրո՛ւ: (3 միավոր)
ա) 729 = ...հարյուրյակ ...տասնյակ ...միավոր
բ) 5 հարյուրյակ 3 տասնյակ 8 միավոր =
5. Հաշվի՛ր: (5 միավոր)
7 x 8 = 4 x 9 = 8 x 6 =
9 x 9 = 20 x 3 = 40 x 2 =
60 x 4 = 3 x 7 = 200 x 4 =
6. Տղան 74 էջանոց գրքից 36 էջը կարդաց: Քանի՞ էջ մնաց կարդալու: (3 միավոր)

IV ստուգում
(մայիսի կեսերին)

1. Շարքում պակասող թվերը լրացրո՛ւ: (3 միավոր)
895, 896, 897, ..., ..., ..., ..., ..., ..., 904
2. Ամեն մի թվի տակ նրա նախորդ թիվը գրի՛ր: (3 միավոր)
7600 830 579 6718 10000
3. Թվերը աճման կարգով դասավորի՛ր: (3 միավոր)
768, 599, 801
4. Հաշվի՛ր: (4 միավոր)
8 x 9 = 7 x 8 = 8 x 8 = 7 x 9 =
200 x 4 = 3000 x 3 = 400 x 3 = 500 x 4 =
5. Հաշվի՛ր: (4 միավոր)
48 : 6 = 54 : 9 = 70 : 7 = 32 : 4 =
6. Տղան 370 դրամանոց գիրք և 250 դրամի տետր գնեց: Նա քանի՞ դրամ ծախսեց: (3 միավոր)

Տարեվերջյան ստուգում

1. Շարքի թվերից ամենամեծի նախորդ թիվը գրի՛ր: (3 միավոր)
768, 1000, 2916, 999, 4000
2. Հաշվի՛ր: (3 միավոր)
1000 x 3 + 100 x 4 + 10 x 5 + 6 =
5 x 1000 + 7 x 10 + 4 =

3. Հաշվի՛ր: (2 միավոր)

56 x 4 = 78 x 5 = 87 x 6 = 29 x 7 =

4. Լրացրո՛ւ բաց թողած թվերը: (2 միավոր)

3674 = հազարյակ հարյուրյակ տասնյակ միավոր

9 հազարյակ 1 հարյուրյակ 8 տասնյակ 4 միավոր =

5. Հաշվի՛ր: (8 միավոր)

ա) 276-ից 178-ով մեծ թիվը

բ) 29-ից 4 անգամ մեծ թիվը

գ) 48-ից 8-ով փոքր թիվը

դ) 48-ից 8 անգամ փոքր թիվը:

6. Կետերը միացնելով՝ եռանկյուններ ստացի՛ր: Քանի՞ եռանկյուն ստացվեց: (2 միավոր)

ՈՒՍՈՒՑՉԻ ՏԱՍԸ ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐԸ

Ջորջ Փոյա

1. Հետաքրքրվեցե՛ք ձեր առարկայով:

2. Իմացե՛ք ձեր առարկան:

3. Իմացե՛ք, թե որ ճանապարհով կարելի է ուսումնասիրել այն, ինչը ձեզ անհրաժեշտ է: Ուսումնասիրման լավագույն ձևն է ինքնուրույն հայտնաբերելը:

4. Կարողացե՛ք կարդալ աշակերտների դեմքերը: Ջանացե՛ք տեսնել, թե ինչ են սպասում նրանք ձեզանից, ըմբռնել նրանց դժվարությունները. կարողացե՛ք ձեզ իրենց տեղը դնել:

5. Մի՛ սահմանափակվեք մերկ տեղեկատվությամբ. ջանացե՛ք աշակերտների մոտ որոշակի ունակություններ, խելքի անհրաժեշտ կերտվածք և կանոնապահ աշխատանքի սովորություն զարգացնել:

6. Ջանացե՛ք նրանց կռահել սովորեցնել:

7. Ջանացե՛ք նրանց ապացուցել սովորեցնել:

8. Հայտնաբերե՛ք ձեր խնդրում այն, ինչը կարող է ուրիշ խնդիրների լուծման ժամանակ պետք գալ. տվյալ կոնկրետ իրադրության խորքից ջանացեք ընդհանուր մեթոդը երևան հանել:

9. Մի՛ հայտնեք անմիջապես ձեր գաղտնիքը, թող աշակերտները փորձեն կռահել այդ գաղտնիքը, մինչ այն նրանց կհաղորդեք. թողե՛ք աշակերտներն իրենք հնարավորին չափ շատ բան գտնեն:

10. Օգտագործե՛ք գլխի գցող ցուցումները, բայց ձեր կարծիքը մի՛ պարտադրեք:

Այժմ ցանկանում եմ այս տասը կանոնները համադրել փոքրիկ մեկնաբանություններով:

Այս կանոնները ձևակերպելով՝ նկատի ունեի միջին դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչների համար նախատեսված սեմինարների մասնակիցներին, սակայն մեր կանոնները կիրառելի են ուսուցման ցանկացած տեսակի համար, ցանկացած մակարդակով շարադրվող ամեն մի առարկայի համար: Բայց հենց միջին դպրոցում և հատկապես մաթեմատիկայի ուսուցիչների առջև են ամենամեծ հնարավորությունները բացվում այդ կանոններից մի քանիսի կիրառման համար. մասնավորապես՝ դա վերաբերում է 6, 7 և 8 կանոններին:

Ո՞ւմ հեղինակությամբ են հաստատված այս 10 պատվիրանները: Թանկա-

գի՛ն ընկերակից-ուսուցիչ. մի՛ ենթարկվեք ***ոչ մի*** հեղինակության՝ թող ձեզ ղեկավարի միայն սեփական փորձը և այդ փորձի վրա խարսխվող սեփական դատողությունը: Աշխատե՛ք պարզ տեսնել, թե ինչ է նշանակում այս կամ այն խորհուրդը կոնկրետ իրադրության մեջ, որին բախվել եք, փորձարկե՛ք այդ խորհուրդը դասարանում և կայացրե՛ք ձեր վերջնական եզրակացությունը միայն անցկացրած փորձի անաչառ վերլուծությունից հետո:

Այժմ հաջորդաբար դիտարկենք այս 10 կանոնները մեկը մյուսի ետևից՝ հատուկ ուշադրություն հատկացնելով մաթեմատիկայի դասավանդման խնդիրներին:

1. Գոյություն ունի դասավանդման միայն մի անխափան եղանակ. եթե ուսուցիչը հափշտակված է իր առարկայով, ապա հափշտակված կլինի նաև ամբողջ դասարանը:

Այս դիտողությունը պետք է որ բավարար լինի, որպեսզի ակնհայտ դառնա ուսուցչի առաջին և ամենագլխավոր պատվիրանը. ***«Հետաքրքրվեցե՛ք ձեր առարկայով»***:

2. Եթե առարկան ձեզ չի հետաքրքրում, ապա հրաժարվե՛ք դասավանդումից, որովհետև երբեք չեք կարողանա այն լավ շարադրել: Հետաքրքրությունը sine qua non* է՝ միանգամայն անհրաժեշտ պայման, որը, սակայն, դեռևս բավարար չէ: Ամենաանկեղծ շահագրգռվածությունը և մեթոդական հնարքների առատությունը ձեզ չեն օգնի ուրիշներին լավ բացատրել այն, ինչն ինքներդ վատ եք հասկանում:

Այս դիտողությունն էլ պետք է որ բավարար լինի՝ ակնհայտ դարձնելու ուսուցչի երկրորդ պատվիրանը. ***«Իմացե՛ք ձեր առարկան»***:

Ուսուցչին անհրաժեշտ է և՛ հետաքրքրվել իր առարկայով, և՛ գիտենալ այն: Հետաքրքրությունը ես առաջին տեղն եմ մղում, քանի որ իսկական հետաքրքրության առկայության դեպքում դուք լավ հնարավորություններ ունեք՝ անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերելու համար, այնինչ հետաքրքրության բացակայությունը, անգամ առարկային որոշ չափով ծանոթ լինելու դեպքում, հեշտությամբ բացառիկ վատ ուսուցիչներ է դաստիարակում:

3. Ուսումնասիրման գործընթացի հոգեբանական կողմին նվիրված լավ դասախոսություն ունկնդրելով կամ լավ գիրք ընթերցելով՝ շատ օգուտ կարող եք ստանալ, սակայն ո՛չ գրքերի ընթերցումը, ո՛չ դասախոսությունների ունկնդրումը նշված գործընթացի բացարձակապես անհրաժեշտ հատկանիշները չեն և, համենայն դեպս, ո՛չ մի կերպ բավարար չեն այդ գործընթացի արդյունավետության համար: Դուք պետք է գիտենաք, թե ***որ ճանապարհով կարելի է ուսումնասիրել այն, ինչը ձեզ անհրաժեշտ է***, ուսումնասիրման գործընթացի հետ պետք է սերտորեն ծանոթ լինեք ***սեփական փորձի*** ինքնուրույն ուսումնասիրման գործընթացում ձեռք բերած և սեփական աշակերտների զննումից քաղած փորձի հիման վրա:

Վատ է, երբ ներքին դրդապատճառներ չունենալով՝ համաձայնվում են

* Պարտադիր պայման (լատ.):

սկզբունքի հետ. էլ ավելի վատ է, երբ միայն խոսքերով է սկզբունքին տուրք տրվում: Սակայն դեպք կա, երբ իսկապես ոչ մի կերպ չի կարելի իրեն թույլ տալ՝ բավարարվելու սկզբունքի հետ մակերեսային կամ միայն առերևույթ համաձայնությամբ. այստեղ նկատի ունեմ դասավանդման հիմնական եռանդուն ուսումնասիրման սկզբունքը: Դուք պետք է լիովին հասկանաք, որ ուսումնասիրման գործընթացում այդ սկզբունքը կենտրոնական տեղն է զբաղեցնում: ***Ինքնուրույն հայտնաբերելը՝ ուսումնասիրման լավագույն ձևն է***:

4. Նույնիսկ իսկական գիտելիքների տիրապետելով, աշխույժ հետաքրքրություն ցուցաբերելով և ինչ-որ չափով ուսումնասիրման գործընթացը հասկանալով՝ դուք կարող եք թույլ ուսուցիչ մնալ: Ընդունում եմ, որ այդ դեպքը չի կարելի սովորական համարել, բայց դա այնքան էլ հազվադեպ չէ: Մեզանից ոմանց վիճակվել է հանդիպել բոլոր տեսակետներից միանգամայն իրազեկ, բայց իր դասարանի հետ կապ հաստատել չկարողացող ուսուցչի: Որպեսզի մեկ անհատականության՝ ուսուցչի կողմից ղեկավարվող ուսուցումը արդյունքում հանգեցնի այլ անհատականությունների՝ աշակերտների կողմից առարկայի ուսումնասիրմանը, նրանց միջև որոշակի կապ պետք է հաստատվի՝ ուսուցիչը պետք է ըմբռնի աշակերտի դիրքորոշումը, պետք է կարողանա անհրաժեշտ պահին սատարել նրան: Դրա վրա է խարսխվում հաջորդ պատվիրանը. « ***Կարողացե՛ք կարդալ աշակերտների դեմքերը: Ջանացե՛ք տեսնել, թե ինչ են սպասում նրանք ձեզանից, ըմբռնել նրանց դժվարությունները. կարողացե՛ք ձեզ իրենց տեղը դնել***»:

Աշակերտների արձագանքն այն բանին, ինչն ուսուցանում եք նրանց, կախված է պատրաստվածության մակարդակից, ապագայի նրանց հեռանկարներից, նրանց հետաքրքրություններից: Ուստի միշտ հիշե՛ք և հաշվի՝ առեք, թե ինչ գիտեն նրանք և ինչ չգիտեն, ինչ կցանկանային իմանալ և ինչը նրանց բոլորովին չի հուզում, ինչ պետք է նրանք գիտենան և ինչը կարող են չգիտենալ:

5. Նախորդ չորս կանոնները մանկավարժական հմտության հիմքում են դրված: Ամբողջությամբ վերցրած՝ դրանք հաջողակ դասավանդման անհրաժեշտ և բավարար պայմանների նման մի բան են կազմում: Եթե դուք հետաքրքրվում եք ձեր առարկայով և գիտեք այն, եթե դրանից բացի՝ կարող եք ձեզ աշակերտի տեղը դնել և տեսնել, թե ինչն է խթանում ուսուցումը և ի՞նչն է այն դժվարացնում, ապա դուք արդե՛ն իսկ լավ ուսուցիչ եք կամ շուտով այդպիսին կդառնաք, դուք միայն որոշ փորձի պահանջ կարող է դեռ զգաք:

Մեզ մնում է նախորդ կանոնների որոշ հետևանքները մեկնաբանել՝ գլխավորապես այնպիսիները, որոնք միջին դպրոցում մաթեմատիկայի ուսուցչի դիրքավորմանն են վերաբերում:

Ցանկացած գիտելիք կազմված է մասամբ «տեղեկատվությունից» («զուտ իմացություն») և մասամբ՝ «հմտությունից» (know-how): Հմտությունը վարպետություն է, սեփական նպատակներին հասնելու համար ձեր ունեցած տեղեկություններն օգտագործելու կարողությունը. հմտությունը, բացի դրանից, կա-

րելի է բնորոշել որպես որոշակի ունակությունների ամբողջություն: Վերջին հաշվով՝ հմտությունը մեթոդաբար աշխատելու կարողությունն է:

Մաթեմատիկայում հմտությունը խնդիրներ լուծելու, ապացուցումներ կատարելու, ինչպես նաև՝ ստացված լուծումներն ու ապացուցումները քննադատաբար վերլուծելու ունակությունն է: Մաթեմատիկայում հմտությունը շատ ավելի կարևոր է, քան միմիայն զուտ գիտելիքը, քան մերկ տեղեկատվությունը: Արդ՝ մաթեմատիկայի ուսուցչի համար հատուկ կարևորություն ունի հաջորդ պատվիրանը. «***Մի՛ սահմանափակվեք միմիայն փաստերի հաղորդմամբ, ջանացե՛ք աշակերտների մոտ որոշակի ունակություններ, խելքի անհրաժեշտ կերտվածքև կանոնապահ աշխատանքի սովորություն զարգացնել***»:

Քանի որ մաթեմատիկայում հմտությունը գիտելիքից կարևոր է, ապա իմ կարծիքով՝ մաթեմատիկա սովորեցնելիս շատ ավելի կարևոր է ***ինչպես*** դասավանդելը, քան այն, թե ***ինչ*** եք դասավանդում:

6. Նախ՝ կռահեք, իսկ այնուհետև՝ ապացուցեք. սովորաբար այսպես է հայտնագործություն արվում: Դուք այդ պետք է գիտենաք (ամենից լավը՝ սեփական փորձից), և դրանից բացի՝ պետք է իմանաք, որ մաթեմատիկայի ուսուցիչը բազմաթիվ հիանալի հնարավորություններ ունի՝ հայտնագործության մեջ կռահելու դերը ցուցադրելու և դրանով իսկ աշակերտների մոտ խելքի այն կերտվածքի զարգացմանը նպաստելու համար, որը ցանկացած հետազոտական աշխատանքում հիմնավորապես կարևոր նշանակություն ունի: Վերջին հանգամանքը հայտնի չէ այնչափ, որքան դա անհրաժեշտ է, և հենց այդ պատճառով հատուկ ուշադրության է արժանի: Կցանկանայի՝ այդ առումով հոգ տանեիք ձեր աշակերտների մասին: ***Ջանացե՛ք նրանց կռահել սովորեցնել***:

Թույլ և թեթևամիտ աշակերտները կարող են առավել «վայրենի» կռահումներ և ենթադրություններ առաջադրել: Այն, ինչը պարտավոր ենք նրանց սովորեցնել՝ «նպատակաուղղված», «իմաստավորված», «խելամիտ» կռահումն է: Խելամիտ կռահումը հիմնված է մակածման (ինդուկցիայի) և համանմանության (անալոգիայի) իմաստավորված կիրառման վրա և վերջին հաշվով՝ ցանկացած գիտական մեթոդի մեջ կարևոր դեր խաղացող «ճշմարտանման դատողությունների» բոլոր փուլերն է ներգրավում[1]:

7. «***Մաթեմատիկան ճշմարտանման դատողությունների լավ դպրոց է***»: Այս պնդումն ամփոփում է նախորդ կանոնի հիմքում ընկած հետևությունը. այն կարող է ինչ-որ մեկին զարմացնել և բոլորովին նոր ծագում ունի. ինձ թվում է նույնիսկ, որ կարող եմ դրա հեղինակն անվանվելու պատվին հավակնել:

«***Մաթեմատիկան արտածական (դեդուկտիվ) կամ ապացուցական դատողությունների լավ դպրոց է***»: Այս պնդումը ոչ մեկի մոտ տարակուսանք չի հարուցի, հնարավոր է, որ դրա մի որևէ տարբերակը նույնքան վաղեմի է,

[1] Համեմատի՛ր նաև հեղինակի [4] գրքի հետ:

որքան և մաթեմատիկան ինքը: Իրականում ճիշտ է շատ ավելի խիստ պնդումը՝ մաթեմատիկայի սահմանները ներառնում են զարգացման այն մակարդակին հասած ցանկացած գիտությանը վերաբերող ապացուցական դատողությունների ամբողջ տիրույթը, որի դեպքում այդ գիտությանը վերաբերող հասկացությունները կարող են արտահայտվել վերացական, տրամաբանական-մաթեմատիկական ձևով: Այդ մակարդակից ներքև իսկապես ապացուցական դատողությունը տեղ չունի (այսպես օրինակ՝ մեր ամենօրյա կյանքում խիստ «ապացուցմամբ» ուղեկցվող դատողություններ հույժ հազվադեպ են հանդիպում): Պարզ է (անհրաժեշտություն չունեմ բոլորի կողմից ընդունված այդ տեսակետը ընդարձակորեն փաստարկելու), որ մաթեմատիկայի ուսուցիչը պետք է իր բոլոր աշակերտներին (թերևս, բացի ամենակրտսեր դասարաններում սովորողներից) ծանոթացնի ապացուցական դատողություններին: ***Ջանացե՛ք նրանց ապացուցել սովորեցնել***:

8. Հմտությունները, ունակությունները մաթեմատիկական կուլտուրայի առավել կարևոր բաղկացուցիչ մասն են կազմում, շատ ավելի կարևոր, քան որոշակի փաստերի և թեորեմների պարզապես գիտենալը: Բայց ինչպե՞ս հմտություն սովորեցնել: Աշակերտները կարող են անհրաժեշտ ունակություններ ձեռք բերել ***միայն*** ընդօրինակման և, հատկապես, գործնական աշխատանքի ճանապարհով:

Խնդրի լուծումը ցուցադրելիս ***առանձնացրե՛ք այդ լուծման ուսանելի կողմերը***: Լուծման որոշակի կողմը կարող է «ուսանելի» կոչվել, եթե այն արժանի է ընդօրինակման, այսինքն՝ եթե կարելի է այն օգտագործել ոչ միայն մեկ խնդրի, այլ նաև՝ ուրիշ խնդիրների լուծման համար. և որքան ավելի հաճախ է կիրառվել նշված առանձնահատկությունը, այնքան ավելի ուսանելի պետք է այն համարել: Լուծման ուսանելի առանձնահատկություններն ընդգծե՛ք ոչ միայն դրանց գովաբանմամբ (ինչը կարող է և հակառակ տպավորությունն առաջացնել), այլև գլխավորապես ձեր ***պահելաձևով*** (մի փոքր դերասանությունը շատ լավ է. լավ ուսուցիչը պետք է գոնե մի քիչ դերասան լինի): Հաջող կերպով զատված առանձնահատկությունը կարող է ձեր լուծումը ***տիպակա-նի*** վերածել՝ ուսանելի մի մեթոդի, որին ընդօրինակելով՝ աշակերտները կկարողանան բազմաթիվ այլ խնդիրներ լուծել*: Այստեղից էլ՝ կանոնը. «***Հայտնաբերե՛ք ձեր խնդրում այն, ինչը կարող է ուրիշ խնդիրների լուծման ժամանակ պետք գալ. տվյալ կոնկրետ իրադրությունից ջանացե՛ք ընդհանուր մեթոդը երևան հանել***[1]»:

9. Ուզում եմ խորհուրդ տալ ձեզ մի փոքրիկ հնարք, որին ամեն մի ուսուցիչ պետք է ծանոթ լինի. խնդրի քննարկմանը ձեռնամուխ լինելով՝ առաջարկեք աշակերտներին՝ կռահել լուծումը կամ պատասխանը: Աշակերտը, ում մտքում

* Համեմատի՛ր նաև հեղինակի մի այլ մտքի հետ. մեկ անգամ կիրառված գաղափարը արհեստական եղանակ է, կրկնակի կամ եռակի կիրառված արդեն մեթոդ է դառնում:

[1] Ցանկանո՞ւմ եք արդյոք հետագա մանրամասնություններ: Ընթերցե՛ք «Մաթեմատիկական հայտնություն» գիրքն ամբողջությամբ:

մի որևէ ենթադրություն է ծագել, որը նա համարձակվել է բարձրաձայն արտահայտել, դրանով իսկ իր վրա հետագայի համար որոշ պատասխանատվություն է վերցրել. մի՛ վախենաք, որ նա այնուհետև ուշադրությունը կշեղի. նա կհետևի լուծման ընթացքին, որպեսզի իմանա՝ արդյո՞ք իրավացի էր:

Այս փոքրիկ հնարքը կարող է դիտվել հետևյալ կանոնի (որը, իր հերթին, 3 և 6 կանոնների մի մասն է) մասնավոր դեպք. «***Մի՛ հայտնեք անմիջապես ձեր գաղտնիքը. թող աշակերտները փորձեն կռահել այդ գաղտնիքը, մինչ այն նրանց կհաղորդեք. թողե՛ք հենց իրենք հնարավորին չափ շատ բան գտնեն***»:

Իրականում այս կանոնի հայտնագործման պատիվը պատկանում է Վոլտերին. նա այն արտահայտել է հետևյալ ասույթի տեսքով. «***Le secret d'etre ennuyeux c'est de tout dire***» - «***Եթե ձանձրալի եք ցանկանում լինել, ապա մինչև վերջ ամեն ինչ պատմեք***»:

10. Աշակերտն ինձ ցույց է տալիս մի երկար հաշվարկ: Դրա վերջին տողին հայացք ձգելով՝ տեսնում եմ, որ հաշվարկը ճիշտ չէ, սակայն չեմ շտապում աշակերտին այդ մասին տեղեկացնել: Գերադասում եմ «անցնել» ամբողջ հաշվարկով՝ տող առ տող. «Լա՛վ եք սկսել՝ ձեր հաշվարկի առաջին տողը ճիշտ է: Հաջորդը՝ նույնպես. կատարել եք այսինչը և այսինչը: Հաջորդ տողում նույնպես սխալներ չկան: Այսպե՞ս, այսպե՞ս՝ իսկ ի՞նչ կարծիքի եք ա՛յս տողի մասին»: Սխալը հենց այդ տողից է սկիզբ առնում, և եթե աշակերտն ինքը դա հայտնաբերի, ապա նա հնարավորություն ունի ինչ-որ բան սովորելու: Իսկ եթե միանգամից ասեմ՝ «Դա սխա՛լ է», ապա աշակերտը կարող է նեղանալ և կդադարի ինձ լսել: Եվ եթե ինձ թույլ տամ շատ հաճախակի ասել. «Դա սխալ է», ապա աշակերտն ինձ կատի, և հենց այդ աշակերտին վերաբերող բոլոր իմ հետագա ջանքերը կկորչեն իզուր:

Թանկագի՛ն ընկերակից-ուսուցիչ. խուսափե՛ք այսպիսի բառերից՝ «Դուք սխալվե՛լ եք»: Դրանց փոխարեն ասեք. «Ընդհանուր առմամբ իրավացի՛ եք, բայց...»: Հավատացե՛ք ինձ՝ դա երեսպաշտություն չէ, այլ ընդամենը միայն մարդկայնություն: Հնարավոր է, որ նման մեթոդիկա ձեզ կհուշի կանոն 4-ը: Սակայն այդ խորհուրդը կարելի է ավելի բացահայտ ձևով հրամցնել. «***Օգտագործե՛ք գլխի գցող ցուցումները, բայց ձեր կարծիքը մի՛ պարտադրեք***»:

Մեր վերջին երկու կանոնները՝ 9-ը և 10-ը, միևնույն նպատակին են ուղղված. դրանք հանձնարարում են այնքան ազատություն և նախաձեռնություն տալ աշակերտներին, որքան հնարավոր է սովորեցման ներկա պայմաններում: Ժամանակի սղությամբ կաշկանդված՝ մաթեմատիկայի ուսուցիչը հաճախ գայթակղության է ենթարկվում՝ մեղանչելով այս կանոնների, այսինքն՝ ***եռանդուն ուսումնասիրման*** սկզբունքի դեմ: Նա երբեմն շտապում է ստանալ լուծումը՝ աշակերտներին բավարար չափով ժամանակ չթողնելով խորամուխ լինել այդ լուծման մեջ: Նա կարող է հասկացությունը գործադրել կամ կանոնը ձևակերպել չափազանց արագ՝ առանց բավարար նախապատրաստման, նախքան

աշակերտներն այդպիսի հասկացության կամ կանոնի անհրաժեշտությունը կզգան: Երբեմն նա կարող է գործել deus ex machina* սկզբունքով, այսինքն՝ մի այնպիսի միջոցից օգտվել (օրինակ՝ երկրաչափական գծագրի վրա մի որևէ «խորամանկ» օժանդակ գիծ անցկացնել), որն անմիջապես կհանգեցնի պահանջվող արդյունքին...

Նշված սկզբունքը խախտելու համար գայթակղություններ շատ կան: Արդ՝ ուշադրություն դարձնենք այդ սկզբունքի մի քանի այլ տեսանկյունների վրա.

Հասե՛ք այն բանին, որ ձեր աշակերտները հարցեր տան, կամ ինքնե՛րդ տվեք այն հարցերը, որոնք կարող էին նրա՛նց մոտ ծագել:

Հասե՛ք այն բանին, որ ձեր աշակերտները կարողանան հարցերին պատասխանել, կամ ինքնե՛րդ պատասխանեք այդ հարցերին, բայց այնպես, ինչպես կարող էին ձեր աշակերտնե՛րը դրանց պատասխանել:

Բոլոր դեպքերում աշխատեք խուսափել այն հարցերից, որոնք երբեք չեն ծագում ոչ մեկի մոտ, այդ թվում՝ հենց ձեզ մոտ:

---

* Աստված մեքենայի միջից (լատ.):

«Շաղիկ»
հրատարակչությունը
կրտսեր դպրոցում
դասավանդող
ուսուցիչներին
առաջարկում է՝

ՋԱՆԻ ՌՈԴԱՐԻ

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ «Շաղիկ» 1995



ԹԵՎԱՆ ԴԱՎԹՅԱՆ

ՍՈՎՈՐԵՆՔ ՇԱԽՄԱՏ ԽԱՂԱԼ
ԳԻՐՔ 1
Շախմատի այբբենարան

ԵՐԵՎԱՆ «Շաղիկ» 1995



ՌՈՒԴԻԿ ՀԱՐՈՅԱՆ

ՉՈՐԻ-ՉՈՐԻ

ԵՐԵՎԱՆ «Շաղիկ» 1995



ՌՈՒԴԻԿ ՀԱՐՈՅԱՆ

ՁԱՏԻԿ

ԵՐԵՎԱՆ «Հաղիկ» 1996



ԹԵՎԱՆ ԴԱՎԹՅԱՆ

ՍՈՎՈՐԵՆՔ ՇԱԽՄԱՏ ԽԱՂԱԼ
ԳԻՐՔ 2
Ռազմավարություն և մարտավարություն

ԵՐԵՎԱՆ «Հաղիկ» 1995

Խմբագիր և սրբագրիչ՝ Դորա Մարտիրոսյան
Նկարիչ՝ Մկրտիչ Մաթևոսյան
Էջադրող՝ Վահագն Այվազյան

Ստորագրված է տպագրության՝ 20.08.1996թ.:
Թուղթ՝ օֆսեթ N2: Չափսը՝ 60x84 $^1/_{16}$:
Տպագրությունը՝ օֆսեթ:
Տպագրական 4.5 մամուլ: Տպաքանակ՝ 3000:
«Անիվ» դուստր ձեռնարկության
«Շաղիկ» հրատարակչություն.
Երևան, Հարավարևմտյան զանգված, Բ-1
թաղամաս, Ա.Բաբաջանյան փողոց:
Տպագրված է ՀՀ «Մխիթար Սեբաստացի»
կրթահամալիրի տպարանում:
Երևան, Հարավարևմտյան զանգված, Բ-1
թաղամաս, Ռաֆֆու փող., 4:

© «ՇԱՂԻԿ» 1996